

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀՈՒՆԻՍ 2026

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Սնանկության օրենսգիրք; մի շարք այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-252-Ն (ընդունված՝ 18.06.2026, ուժի մեջ՝ 03.07.2027թ.)

- 2026թ. հունիսի 18-ին ընդունված նոր օրենսգիրքը սահմանում է սնանկության իրավահարաբերությունների միասնական կարգավորումներ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: Օրենսգիրքը տարածվում է բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց վրա, սակայն բանկերի, վարկային և ապահովագրական կազմակերպությունների սնանկության հարաբերությունները շարունակվում են կարգավորվել հատուկ օրենքով՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ներդրումային ֆոնդերի և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով:
- Սնանկության օրենսգիրքը նախատեսում է իրավաբանական անձի անվճարունակության դեպքերը՝
 1. երբ իրավաբանական անձը թույլ է տվել նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը (5,000,000/ հինգ միլիոն ՀՀ դրամ) գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 1-ամսյա կամ ավելի ժամկետով կետանց (փաստացի անվճարունակություն):
 2. երբ հաշվապահական հաշվառման կանոնների հիման վրա կատարված գնահատմամբ պարտապանի պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը (հաշվեկշռային անվճարունակություն):
- Ֆիզիկական անձինք կարող են անվճարունակ ճանաչվել միայն փաստացի անվճարունակության դեպքում, այն է՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը (5,000,000/հինգ միլիոն ՀՀ դրամ) գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 1-ամսյա կամ ավելի ժամկետով կետանցի դեպքում:
- Պարտապանի ղեկավարը կամ լուծարման հանձնաժողովը պարտավոր են 1-ամսյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան կամավոր սնանկության հիմքերի հայտնաբերման դեպքում: Այս պարտականության չկատարումն առաջացնում է սուբսիդիար պատասխանատվություն:
- Ներդրվել է «ոչ իրավաչափ սնանկության» հասկացությունը (կանխամտածված կամ անբարեխիղճ գործողություններ), որի դեպքում պարտապանի հիմնադիրները կամ ղեկավարները կրում են համապարտ պատասխանատվություն հաստատված պահանջների չափով:
- Սահմանվել է նոր ընթացակարգ սնանկության վտանգի դեպքում, որը թույլ է տալիս մինչև 4 ամիս ժամկետով իրականացնել վերակառուցման ծրագիր՝ սնանկությունը կանխելու նպատակով:
- Սնանկ ճանաչելու մասին վճիռն ուժի մեջ մտնելուց հետո դադարում է տոկոսների և տույժերի հաշվարկը, պարտավորությունների կատարման ժամկետները համարվում են լրացած, և կասեցվում են գույքի տնօրինման լիազորությունները:
- Ֆինանսական առողջացման ծրագիրը կարող է տևել մինչև 72 ամիս: Ծրագրի բացակայության դեպքում սկսվում է լուծարման վարույթ: Ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված լինելու դեպքում ապահովված պարտատերերի պահանջները բավարարում են ծրագրով նախատեսված կարգով, իսկ եթե ծրագիրը չի հաստատվել, դադարեցվել է կամ պարտապանի ֆինանսական միջոցները բավարար չեն ապահովված պահանջները բավարարելու համար՝ Սնանկության օրենսգրքով նախատեսված կարգով: Նոր կարգավորում է նոր իրավաբանական անձի ստեղծման վարույթի իրականացումը, որը պարտապանի առանձնացման ձևով վերակազմակերպումն է և այդ վերակազմակերպման արդյունքում հիմնադրվող (նոր ստեղծվող) իրավաբանական անձի բաժնեմասի փոխանցումն է պարտատերերին:
- Նախատեսվում է նաև հնարավորություն պարտապանի հիմնադիրների համար՝ մինչև լուծարման վարույթի ավարտը միաժամանակ բավարարել պարտատերերի բոլոր պահանջները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՕ-281-Ն (ընդունված՝ 18.06.2026 թ., ուժի մեջ՝ 10.07.2026թ.)

- Նախատեսվել է աշխատող ծնողների համար՝ ծնողական ժամի կարգավորում: Ծնողական ժամը տրամադրվում է երեխայի խնամքի, դաստիարակության, կրթական գործընթացներին մասնակցության և այլ պարտականությունների իրականացման նպատակով:
- Ծնողական ժամի դեպքում ծնողը, խնամատար ծնողը, որդեգրողը կամ խնամակալը իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ բացակայելով աշխատանքի վայրից: Օրենքը սահմանում է, որ գործատուն չի կարող մերժել ծնողական ժամ տրամադրելու վերաբերյալ աշխատող ծնողի գրավոր դիմումը: Ծնողական ժամանակը ներառվում է աշխատաժամանակում և այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի հիմնական աշխատավարձը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-248-Ն, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-249-Ն (ընդունված՝ 18.06.2026թ., ուժի մեջ՝ 06.07.2026թ.)

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳ) ոլորտում կատարված փոփոխություններով վերանայվել են հանրության մասնակցության, փորձաքննության ենթակա գործունեության տեսակների և պետական տուրքի վճարման կարգավորումները:
- Օրենքում տարրանջատվել են «հանրություն» և «շահագրգիռ հանրություն» եզրույթները: Հանրություն է համարվում մեկ կամ մի քանի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կամ դրանց խմբերը, իսկ շահագրգիռ հանրություն՝ այն անձինք, որոնք կրում են նախատեսվող գործունեության անմիջական կամ հավանական ազդեցությունը կամ հետաքրքրություն են ցուցաբերում որոշումների ընդունման նկատմամբ:
- Վերանայվել են մի շարք փորձաքննության ենթակա գործունեության շեմերը, այդ թվում՝ քիմիական կամ կենսաբանական պրոցեսներով դեղագործական արտադրանքի կայանքների, ասբեստի մշակման (տարեկան 20,000 մետր-տոննա պատրաստի արտադրանքի շեմ), թղթի և ստվարաթղթի արտադրության (օրական 20 տոննա գերազանցող հզորություն) համար:
- Նախատեսվել է, որ փորձաքննության ենթակա չեն պետական կամ համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների կառուցումը կամ հիմնանորոգումը, ինչպես նաև մարզադաշտերի և մարզահամալիրների վերակառուցումը:

- Հստակեցվել են ՌԷԳ-ի ենթակա ոլորտները (գյուղատնտեսություն, էներգետիկա, արդյունաբերություն, տրանսպորտ և այլն) և դրա իրականացման փուլերը՝ նախնական գնահատումից մինչև արդյունքների հաշվառում հիմնադրույթային փաստաթղթում: ՌԷԳ-ի ենթակա չեն ֆինանսական կամ բյուջետային բնույթի հիմնադրույթային փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև այն հիմնադրույթային փաստաթղթերի նախագծերը, որոնց միակ նպատակը ազգային անվտանգությանը, պաշտպանությանը, քաղաքացիական արտակարգ իրավիճակներին ծառայելն է:
- Սահմանվել է նոր կարգավորում, ըստ որի՝ եթե փորձաքննական եզրակացության տրամադրումից հետո, բայց մինչև գործունեության սկիզբը հայտնի է դառնում զգալի անդրսահմանային ազդեցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, լիազոր մարմինը պարտավոր է անհապաղ տեղեկացնել ազդակիր պետությանը և քննարկել եզրակացության վերանայման հարցը:
- «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված լրացմամբ՝ նախաձեռնողն ազատվում է պետական տուրքի վճարումից Բ կատեգորիայի մեջ ներառվող անտառապատման գործունեության փաստաթղթերի փորձաքննության համար:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-282-Ն (ընդունված՝ 17.06.2026 թ., ուժի մեջ՝ 19.07.2026թ.)

- Օրենքի փոփոխությամբ որոշակիացվել է մաքսային ստուգումների իրականացման գործընթացը, հստակեցվել է մաքսային ստուգումների գծով չկարգավորված հարաբերությունները, ամրագրվել են մաքսային ստուգմանը վերաբերող փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ծանուցման դրույթները, վերանայվել են պատասխանատվության նորմերը մաքսային ստուգման արդյունքներով հայտնաբերված իրավախախտումների համար: «Մաքսային կարգավորման մասին» օրենքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝
- կամերալ ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 40 աշխատանքային օրը, կամերալ ստուգման սկսելու մասին ստուգման ենթակա անձը պետք է ծանուցվի. 2
- հանվել է կամերալ մաքսային ուսումնասիրության տեսակը, որը կրկնում էր մաքսային հսկողության ձևերը.
- սահմանվել է ստուգման ժամկետի կասեցման վերացման դեպքերը, ինչպես նաև գործնականում հանդիպած և հարկային օրենսգրքով սահմանված կասեցման հիմքերի համանմանությամբ սահմանել նաև մաքսային ստուգման ժամկետի կասեցման համապատասխան հիմքեր.
- սահմանվել է մաքսային ստուգման ակտի վերաբերյալ ստուգվող անձի կողմից առարկություններ ներկայացնելու ժամկետ.

- սահմանվել է ստուգման արդյունքների ամփոփման հիման վրա՝ մաքսային մարմնի կողմից կայացվող որոշումների տեսակները,
- սահմանվել և հստակեցվել են մաքսային ստուգմանն առնչվող փաստաթղթերի ծանուցման եղանակները: Մասնավորապես՝ որպես ծանուցման եղանակներ սահմանվել են՝ առձեռն եղանակը, էլեկտրոնային փոստը, փոստային կապը և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգը: Ընդ որում, հարկային մարմինների հետ իրականացվող բացառապես փաստաթղթաշրջանառությանը համանման մաքսային ստուգումների մասով նույնպես նախատեսվել է տվյալ ծանուցման էլեկտրոնային եղանակը.
- վերացվել են մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող առանձին անձանց համար կրկնվող պահանջները.
- սահմանվել է պատասխանատվություն մաքսային ստուգման արդյունքում հայտնաբերված իրավախախտումների համար՝ կազմակերպությունների նկատմամբ: Այսպես, բացի պակաս հաշվարկված հարկերի գումարների և տուժերի գումարների, գանձվելու է նաև չհաշվարկված կամ պակաս հաշվարկված ընդհանուր գումարների քսան տոկոսի չափով տուգանք, բացառությամբ պայմանական բաց թողնված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները բաց թողնելու պայմանի խախտման դեպքերի, երբ տուգանքը հաշվարկվելու է 50 տոկոսի չափով:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-286-Ն, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-287-Ն (ընդունված՝ 18.06.2026թ., ուժի մեջ՝ 11.07.2027թ.)

- Ներդրվում է առցանց «Հաշվառման ծրագիր», որտեղ գնահատողները մուտք են գործում «Ես եմ» հարթակով: Պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ծրագիր պետք է մուտքագրվեն գնահատման առաջադրանքը, նպատակն ու հասցեն: Հաշվետվության տվյալների մուտքագրումը պարտադիր է. առանց դրա փաստաթուղթը չի կարող օգտագործվել որպես գնահատման հաշվետվություն: Բոլոր հաշվետվությունները կազմվում են էլեկտրոնային, վավերացվում թվային ստորագրությամբ, իսկ յուրաքանչյուր էջին լրացվում է համակարգի գեներացրած անհատական համարը:
- Գնահատման առաջադրանքը դառնում է պայմանագրի անբաժանելի մաս: Անշարժ գույքի գնահատումը պետք է կատարվի բացառապես ֆիզիկական տեղազննության հիման վրա, որի ճշգրտության համար պատասխանատու է գնահատողը: Արգելվում է օգտագործել վավերականությունը չհաստատված աղբյուրների տվյալներ:

- Խախտման հիմքով հաշվառումից հանված գնահատման կազմակերպությունն այլևս չի կարող հաշվառվել լիազոր մարմնում: Պատվիրատուն պարտավոր է տրամադրել ամբողջական, հավաստի տվյալներ և ապահովել տեղազննության հնարավորություն: Այս պարտականությունները չկատարելու դեպքում հաշվետվության անբարենպաստ հետևանքների պատասխանատվությունը կրում է բացառապես պատվիրատուն (բացառությամբ ֆորսմաժորի):
- Լիազոր մարմնի պահանջով գնահատողը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հաշվետվությունները, հաշվարկներն ու նախնական տվյալները (թերի լինելու դեպքում տրվում է ևս 3 օր՝ ճշգրտման համար): Մասնագիտական հանձնաժողովն իրականացնում է հաշվետվությունների ուսումնասիրություն, սակայն այն չի քննում դատարանում գտնվող կամ որպես ապացույց ներկայացված հաշվետվությունները: Շահառուների կամ գնահատման սուբյեկտների դիմումի հիման վրա հանձնաժողովի կողմից ուսումնասիրություն իրականացնելու համար սահմանվում է պետական տուրք՝ բազային տուրքի 30-ապատիկի (30,000 ՀՀ դրամի) չափով:

«Ներդրումների մասին» ՀՕ-285-Ն (ընդունված՝ 18.06.2026 թ., ուժի մեջ՝ 11.08.2026թ.)

- Օրենքը միտված է կարգավորել ՀՀ-ում ներդրումների իրավական հիմքը, ներդրողների իրավունքները և դրանց պաշտպանության կառուցակարգերը, արտոնությունների և ներդրողների պարտականությունները: Օրենքը տարածվելու է և տեղական և օտարերկրյա ներդրողների ու ներդրումների վրա: Հստակեցվում է ներդրում հասկացությունը՝ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության միակնանացնելու նպատակով գույքի, բաժնետոմսի, բաժնեմասի, գույքային իրավունքների և այլ ակտիվների օրինական ձեռքբերումը, հատկացումը, ստեղծումը կամ օգտագործումը որոնք ձեռք են բերվել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով: Ընդ որում, ներդրում չեն համարվում պորտֆելային ներդրումները:
- Խտրականության բացառման շրջանակներում նախատեսվում է, որ օտարերկրյա ներդրողների և իրենց ներդրումների նկատմամբ ՀՀ-ում գործում է ազգային ռեժիմը:
- Նախատեսվում է, որ ներդրումները պաշտպանված են ուղղակի կամ անուղղակի էքսպրոպրիացիայից, մինչև ժամանակ էքսպրոպրիացիան կարող է տեղի ունենալ հանրային գերակա շահի ապահովման կամ արտակարգ կամ ռազմական դրության իրավական ռեժիմների շրջանակներում:

- Վեճերի լուծման մասով ՀՀ-ն կարող է իր համաձայնությունը տալ վեճը միջազգային արբիտրաժում լուծելուն, եթե դա նախատեսված է գործող օրենքներով, ներդրումային համաձայնագրերով կամ միջազգային պայմանագրերով, հակառակ դեպքում վեճերի լուծումն ընդդատյա է ՀՀ դատարաններին: Ընդ որում, նախատեսված է նաև մինչդատական բանակցությունների պարտադիր փուլ (30-90 օր):
- Նախատեսվում է ներդրումային խթանների՝ արտոնությունների սահմանման հնարավորություն՝ ֆիսկալ, ֆինանսական աջակցության, պարզեցված վարչարարության և այլ ձևաչափերով:
- Օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է համարվում «Օտարերկրյա ներդրումների մասին» 1994 թ. թվականի հուլիսի 31-ի ՀՕ-115 օրենքը:
- Քանի որ օրենքը տարածվելու է նաև տեղական ներդրողների վրա, նրանց գույքային և այլ (ոչ բաժնեմասնակցային) ակտիվների համար սահմանվել է օրենքի կիրառման աստիճանական անցում.
 1. օրենքն ուժի մեջ մտնելու պահից այն կտարածվի տեղացի այն ներդրողների վրա, որոնց ներդրումը գերազանցում է 500 մլն դրամը,
 2. 2028թ. հունվարի 1-ից կտարածվի 200 մլն դրամը գերազանցող ներդրումների վրա,
 3. 2030թ. հունվարի 1-ից կտարածվի բոլոր տեղական ներդրողների վրա՝ անկախ գումարի չափից:

«Օդային փոխադրումներ իրականացնողների և օդանավ շահագործողների համար ուղևորների, թռիչքային և սպասարկող անձնակազմի, ուղեբեռի, բեռի և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության նվազագույն պահանջների սահմանման մասին» ՀՕ-284-Ն (ընդունված՝ 18.06.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.)

- Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ օդային տարածքում բոլոր օդային փոխադրողների և շահագործողների նկատմամբ: Բացառություն են կազմում որոշ պետական օդանավեր, 20 կգ-ից պակաս քաշով մոդելային օդանավերը, օդապարիկները, պարաշյուտները և որոշ փոքր կամ ոչ առևտրային նպատակով օգտագործվող թռչող սարքեր:
- Ապահովագրությունը պարտադիր պետք է առկա լինի յուրաքանչյուր թռիչքի համար: Այն ծածկում է ուղևորներին, անձնակազմին, ուղեբեռին, բեռներին և երրորդ անձանց հասցված վնասները, ընդ որում՝ ապահովագրվող ռիսկերի թվում են նաև ռազմական գործողությունները, ահաբեկչությունը, օդանավի հափշտակումը կամ անօրինական զավթումը և քաղաքացիական խռովությունները:

- Նվազագույն ապահովագրական ծածկույթի չափերը Փոխհատուցումները հաշվարկվում են ՓՀԻ-ով (Փոխառության հատուկ իրավունք):՝
 1. մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում փոխհատուցումը կազմում է առնվազն 250,000 ՓՀԻ յուրաքանչյուր անձի համար: (փոքր, ոչ առևտրային օդանավերի դեպքում այն կազմում է 100,000 ՓՀԻ մեկ ուղևորի համար):
 2. ուղեբեռի կորստի կամ վնասման դեպքում առևտրային փոխադրումների ժամանակ նախատեսվում է 1,519 ՓՀԻ մեկ ուղևորի համար, իսկ բեռի դեպքում՝ 26 ՓՀԻ մեկ կիլոգրամի համար.
 3. երրորդ անձինք: Երրորդ անձանց պատճառված վնասի փոխհատուցումը կախված է օդանավի առավելագույն թռիչքային քաշից (ԱԹՔ) և ըստ կատեգորիաների տատանվում է 0.75 միլիոնից մինչև 700 միլիոն ՓՀԻ մեկ պատահարի համար:
- Հայաստանի օդային տարածքով թռիչքներ իրականացնող բոլոր՝ այդ թվում օտարերկրյա փոխադրողները, պարտավոր են լիազոր մարմինն ներկայացնել ապահովագրության վկայագրեր: Եթե լիազոր մարմինը չի հավաստիանում ապահովագրական ծածկույթի պատշաճության հարցում, նրան իրավունք է վերապահվում արգելել տվյալ օդանավի վերասլացքը, ինչպես նաև կիրառել օրենքով սահմանված պատասխանատվության այլ միջոցներ:
- «Օդանավ շահագործողների պատասխանատվության ապահովագրության նվազագույն ծածկույթի սահմանաչափերը սահմանելու մասին» 2009 թվականի հունիսի 10-ի ՀՕ-156-Ն օրենքը ուժը կորցրած է ճանաչվում սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից՝ 2027 թվականի հունվարի 1-ից:

ՀՈՒՆԻՍ ԱՄՍԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ*

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-207-Ն, ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-208-Ն, Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՕ-209-Ն (ընդունված՝ 06.05.2026 թ., ուժի մեջ՝ 08.06.2026 թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքում կատարվել են են մի շարք փոփոխություններ, որոնք առավելապես վերաբերում են թեմատիկ և կամերալ ուսումնասիրությունների անցկացման կարգին.
- 1. ընդլայնվում են հարկային մարմնի կողմից օգտագործվող տեղեկությունների շրջանակները: Եթե նախկինում կամերալ ուսումնասիրության համար հիմք էին ընդունվում միայն հարկային մարմին «ներկայացված» տեղեկությունները, ապա այժմ հիմք կարող են ընդունվել նաև «հարկային մարմնին հայտնի դարձած այլ տեղեկությունները»,
- 2. մեկ հարկային տարվա ընթացքում թեմատիկ ուսումնասիրությունների իրականացման թույլատրելի առավելագույն քանակը «մեկ»-ից դարձել է «երեք»: Յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում երկրորդ կամ երրորդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն կարող է իրականացվել բացառապես հարկային մարմնի ղեկավարի տված հանձնարարագրի հիման վրա: Երրորդ անգամ թեմատիկ ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն այն բացառիկ դեպքում, եթե տվյալ հարկային տարում լրանում է հարկային պարտավորությունների առաջադրման համար սահմանված վաղեմության ժամկետը (որը հիմնված է հարկային մարմնի կամերալ (ներքին) ուսումնասիրության հարկվող գործարքների արդյունքների վրա): Վաղեմության ժամկետը լրանալու տարին նաև ավելացվել է որպես ուսումնասիրության իրականացման նոր առանձին հիմք,
- 3. Օրենսգրքի 349.1-ին հոդվածի 2-րդ մասից հանվել է «հաստատապես հայտնի» բառակապակցությունը: Սա նշանակում է, որ թեմատիկ ուսումնասիրություն սկսելու համար հարկային մարմնի կամերալ ուսումնասիրությամբ վերհանված հարկվող գործարքների վերաբերյալ տվյալներն այլևս պարտադիր չէ, որ կրեն «հաստատապես հայտնի» բնույթ:

- ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխություններով վերանայվել է հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու հանցակազմի խոշոր և առանձնապես խոշոր չափերի շեմերը: Խոշոր չափ է համարվում մեկ հարկային տարվա ընթացքում 30 միլիոն ՀՀ դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 45 միլիոն ՀՀ դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ մեկ հարկային տարվա ընթացքում 50 միլիոն ՀՀ դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 75 միլիոն ՀՀ դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի փոփոխություններով նախատեսվել է, որ վարույթի ընթացքում հսկող դատախազի հաստատմամբ՝ քննիչի կամ դատարանի որոշմամբ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում դրան համարժեք արգելադրված գույքը կամ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրված գույքը կարող է հանվել արգելանքից, եթե գույքի սեփականատերը կամ տիրապետողը ներկայացնում է արգելադրված գույքին համարժեք բանկային երաշխիք:

*Սույն բաժինը ներառում է այն օրենքները, որոնք ընդունվել են ավելի վաղ, սակայն ուժի մեջ են մտնում հունիս ամսին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագրերի լուծման համար անհրաժեշտ համաձայնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին **N 797-Ն** (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ ոչ ուշ, քան 2026 թվականի հուլիսի 18-ը):

- Սահմանվել է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի «Անձնական գրասենյակ» բաժնում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագրերի լուծման համար անհրաժեշտ համաձայնագրի օրինակելի ձևը:
- Նոր մեխանիզմը հնարավորություն է տալիս «Անձնական գրասենյակ» բաժնում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագիրը լուծել թվային միջավայրում՝ այդ նպատակով կիրառելով որոշմամբ հաստատված համաձայնագրի օրինակելի ձևը:

ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1129-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին N 823-Ն (ընդունված՝ 11.06.2026թ., ուժի մեջ՝ 12.06.2026թ.)

- Սույն որոշմամբ ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության տրամադրման կարգավորումները տարածվել են նաև գետերի հունների արգելապատնեշների կառուցման ընթացքում իրականացվող ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի դեպքերի վրա:
- Մինչև փոփոխությունը գործող կարգը նախատեսում էր ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվության տրամադրում տրանսպորտային և հաղորդակցության ուղիների, թունելների և ջրամբարների կառուցման ընթացքում, սակայն չէր կարգավորում գետերի հունների արգելապատնեշների կառուցման շրջանակում իրականացվող հանույթի դեպքերը: Փոփոխությամբ գետերի հունների արգելապատնեշների կառուցումը ներառվել է միանգամյա թույլտվության տրամադրման կարգի կիրառման շրջանակում:
- Փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է գետերի հունների արգելապատնեշների կառուցման ընթացքում իրականացվող ոչ մետաղական օգտակար հանածոների հանույթի համար համապատասխան իրավական կարգավորման ապահովմամբ:

Որպես դրամական միջոցների գրավադրման եղանակով մաքսային վճարների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային մարմիններին վճարման ենթակա այլ հարկերի գծով մաքսային պարտավորությունների կատարման ապահովում, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ներմուծվող ապրանքների մասով որպես դրամական միջոցների գրավադրման եղանակով մաքսային պարտավորությունների կատարման ապահովում՝ կանխավճարների օգտագործման դեպքերն ու պայմանները սահմանելու մասին **N 865-Ն** (ընդունված՝ 18.06.2026, ուժի մեջ՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից):

- Սույն որոշմամբ սահմանվել են մաքսային միասնական հաշվին առկա կանխավճարները որպես դրամական միջոցների գրավադրման եղանակով մաքսային պարտավորությունների կատարման ապահովում օգտագործելու դեպքերն ու պայմանները: Կարգավորումը տարածվում է մաքսային վճարների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային մարմիններին վճարման ենթակա այլ հարկերի գծով մաքսային պարտավորությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ներմուծվող ապրանքների մասով մաքսային պարտավորությունների ապահովման վրա:
- Կանխավճարներն օգտագործվում են հայտարարատուի կամ նրա կողմից լիազորված մաքսային ներկայացուցչի՝ մաքսային մարմին ներկայացրած դիմումի հիման վրա: Դիմումը ներկայացվում է մաքսային մարմինների կողմից կիրառվող էլեկտրոնային համակարգի միջոցով և պետք է ներառի հայտարարատուի նույնականացման տվյալները, մաքսային պարտավորության համար հիմք հանդիսացող փաստաթղթի համարը, մաքսային պարտավորությունների տեսակը և գումարը, ապահովման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ մաքսային ներկայացուցչի կողմից ներկայացվելու դեպքում՝ նաև լիազորագրի վերաբերյալ տեղեկությունները:

- Կանխավճարները կարող են օգտագործվել որպես մաքսային պարտավորությունների կատարման ապահովում, եթե մաքսային միասնական հաշվին առկա կանխավճարների մնացորդը բավարար է համապատասխան ապահովման համար: Եթե հայտարարատուն ունի մաքսային մարմիններին վճարման ենթակա պարտավորություններ, ապա կանխավճարների մնացորդը պետք է բավարար լինի և՛ այդ պարտավորությունների մարման, և՛ մաքսային պարտավորությունների կատարման ապահովման համար: Եթե հայտարարատուն ունի լիազորված տնտեսական օպերատորի կամ օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ կամ օրինապահության հավաստագիր, կանխավճարների մնացորդը կարող է օգտագործվել միայն մաքսային պարտավորությունների կատարման ապահովման համար բավարար լինելու պայմանով:
- Դիմումը մաքսային մարմնի կողմից ուսումնասիրվում է այն ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված պայմանների պահպանման դեպքում համապատասխան դրամական միջոցները նույն ժամկետում ուղղվում են գանձապետական ավանդային հաշվին, իսկ պայմանների չպահպանման դեպքում հայտարարատուն էլեկտրոնային համակարգի միջոցով տեղեկացվում է կանխավճարների օգտագործման անհնարինության մասին:

Մաքսային պարտավորությունների կանխավճարներից մարման եղանակները և հերթականությունը սահմանելու մասին N 874-Ն որոշում (ընդունված՝ 18.06.2026թ., ուժի մեջ է մտնում «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 13.11.2025թ. ՀՕ-379-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից):

- Սույն որոշմամբ սահմանվել են մաքսային պարտավորությունների՝ կանխավճարներից մարման եղանակները և հերթականությունը:
- Մաքսային պարտավորություններ վճարողը կարող է մաքսային մարմինների էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնուրույն սահմանել իր մաքսային պարտավորությունների մարման առաջնահերթությունը՝ նշելով այն մաքսային փաստաթղթերի տվյալները, որոնցում հաշվարկված պարտավորությունները պետք է մարվեն առաջնահերթության կարգով:
- Եթե վճարողը չի ընտրում պարտավորությունների մարման առաջնահերթությունը, մաքսային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ վճարման ժամկետ ունեցող պարտավորությունների առաջնահերթության: Եթե մի քանի պարտավորությունների վճարման ժամկետները նույնն են, մարումը կատարվում է ըստ ավելի վաղ ծագած պարտավորությունների առաջնահերթության:

- Միևնույն մաքսային փաստաթղթի հիման վրա ծագած պարտավորությունները կանխավճարներից մարվում են հետևյալ հերթականությամբ՝ նախ մարվում են մաքսատուրքերի, այնուհետև հարկերի, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, պետական տուրքի, տոկոսների, տույժերի և վերջում՝ մաքսային կանոնների խախտման մասով վարչական տուգանքների գումարները:
- Միաժամանակ, եթե մաքսային պարտավորություններ վճարողի նկատմամբ առկա է մաքսային մարմնի անբողոքարկելի դարձած վարչական ակտով առաջադրված վճարման պարտավորություն կամ չմարված վարչական տուգանք, ապա առաջնահերթ մարվում են վարչական տուգանքի, այնուհետև՝ վարչական ակտով առաջադրված վճարների պարտավորությունները:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 10-ի N 228-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին N 879-Ն որոշում (ընդունվել է՝ 18.06.2026թ., ուժի մեջ է մտել 20.06.2026թ.)

- Որոշմամբ առաջարկվում է հստակեցնել Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող եզրակացությունների տրամադրման կարգը՝ առանձին կարգավորումներ նախատեսելով քանակական սահմանափակումների (քվոտաների) շրջանակներում ներմուծվող ապրանքների համար:
- Որոշմամբ սահմանվում է, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներից բխող քանակական սահմանափակումների դեպքում, եթե այլ ընթացակարգ նախատեսված չէ, նպատակային նշանակությունը հաստատող եզրակացությունը տրամադրվելու է կոնկրետ ներմուծվող խմբաքանակի համար և տվյալ տարվա համար սահմանված քվոտայի շրջանակներում: Քվոտան բաշխվելու է հայտերի ներկայացման ժամանակագրական հերթականությամբ՝ մինչև դրա ամբողջական սպառումը, իսկ միաժամանակ ներկայացված հայտերի դեպքում առկա մնացորդը հայտատուների միջև բաշխվելու է համամասնորեն՝ ըստ նրանց կողմից պահանջվող ծավալների:
- Նախագծով նախատեսվում է նաև քվոտայի սպառումը սահմանել որպես նպատակային նշանակությունը հաստատող եզրակացության տրամադրումը մերժելու առանձին հիմք: Միաժամանակ հստակեցվում է թերի հայտերի քննության ընթացակարգը. եթե հայտը կամ դրան կից փաստաթղթերը թերի են, հայտատուին տրվում է մինչև 1 աշխատանքային օր թերությունները վերացնելու կամ փաստաթղթերը համալրելու համար, իսկ դրանք չվերացնելու դեպքում հայտը մերժվում է:

- Փոփոխություններով մաքսային ոլորտի լիազոր մարմնի համար սահմանվում է նաև տեղեկատվության տրամադրման նոր պարտականություն: Այն մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 15-ը նպատակային նշանակության եզրակացություն տրամադրած լիազոր մարմնին պետք է ներկայացնի նախորդ ամսվա ընթացքում համապատասխան եզրակացությունների կիրառմամբ «Բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ՝ ներառյալ կազմակերպության տվյալները, եզրակացության համարը և ամսաթիվը, մաքսային հայտարարագրի տվյալները, փաստացի հայտարարագրված ծավալը, ինչպես նաև ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը և նկարագիրը:
- Հիմնավորման համաձայն՝ փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող կարգավորումները միասնական ընթացակարգով են կարգավորում ինչպես սովորական նպատակային նշանակության եզրակացությունների, այնպես էլ հակազնազցման տուրքի արտոնության շրջանակում քվոտաների կիրառման համար անհրաժեշտ եզրակացությունների տրամադրումը: Նախագծով փորձ է արվում տարանջատել այս ընթացակարգերը և սահմանել քվոտաների բաշխման միասնական մեխանիզմ՝ ներառյալ հայտերի հերթականության, միաժամանակ ներկայացված հայտերի և քվոտայի սպառման դեպքերը:

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության գնահատողի ընտրության կարգը սահմանելու մասին N 882-Ն որոշում (ընդունված՝ 18.06.2026 թ., ուժի մեջ՝ 20.11.2026 թ.):

- Որոշմամբ սահմանվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության գնահատողի ընտրության նոր ընթացակարգը: Այն կիրառվում է այն դեպքերում, երբ օտարվող սեփականության սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձինք օրենքով սահմանված ծանուցումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում գնահատողի թեկնածություն չեն առաջարկում կամ հրաժարվում են նման առաջարկ ներկայացնելուց: Այդ դեպքում գնահատողի ընտրությունն իրականացվելու է պատահականության սկզբունքով՝ Կադաստրի կոմիտեի հատուկ համակարգչային ծրագրի միջոցով:
- Վիճակահանությանը մասնակցելու են «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառված և ծրագրում ակտիվ կարգավիճակ ունեցող գնահատողները:
- Գնահատողի ընտրության հայտը ծրագրի միջոցով ներկայացնում է օտարման գործառնությունների իրականացման համար պատասխանատու պետական մարմինը, իսկ եթե այդ գործառնությամբ պատվիրակված է Երևանի քաղաքապետին՝ Երևանի քաղաքապետարանը: Հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության նույն որոշման շրջանակում օտարման ենթակա մինչև 200 սեփականությունների համար կարող է ներկայացվել մեկ միասնական հայտ և անցկացվել մեկ վիճակահանություն:
- Յուրաքանչյուր հայտի մուտքագրումից հետո ծրագիրն ինքնաշխատ եղանակով գեներացնում է հայտի հերթական համարը, մուտքագրման և վիճակահանության ամսաթվերը: Վիճակահանությունն անցկացվում է հայտի մուտքագրման օրը՝ առանց Կադաստրի կոմիտեի միջամտության:
- Վիճակահանության առաջին փուլում ծրագիրը պատահականության սկզբունքով ընտրում է հինգ գնահատող: Ընտրված անձինք ստանում են գնային առաջարկ ներկայացնելու հրավեր և պարտավոր են իրենց առաջարկները ներկայացնել ծանուցումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Գնային առաջարկները ներկայացվում են փակ եղանակով: Սահմանված ժամկետի ավարտից հետո ծրագիրն ինքնաշխատ համեմատում է գնային առաջարկները և ընտրում ամենացածր գին առաջարկած գնահատողին: Հավասար նվազագույն գնային առաջարկների դեպքում ընտրությունը դրանց հեղինակների միջև կրկին կատարվում է պատահականության սկզբունքով:
- Ընտրված գնահատողի վերաբերյալ ծանուցումն ուղարկելու հաջորդ աշխատանքային օրը ծրագիրը յուրաքանչյուր հայտի համար առանձին ձևավորում է վիճակահանության արդյունքների արձանագրություն: Արձանագրությունը ներառում է հայտի, օտարվող սեփականության, վիճակահանության ամսաթվի, մասնակիցների թվի, ընտրված գնահատողի և նրա ներկայացրած գնային առաջարկի վերաբերյալ տվյալները: Արձանագրությունն ինքնաշխատ ուղարկվում է լիազոր մարմնին, իսկ վիճակահանության արդյունքները ծրագրում պահպանվում և բաց հասանելի են մնում առնվազն հինգ տարի:
- Նույն ընթացակարգը կիրառվում է նաև օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքների գնահատման համար՝ հայտում և արդյունքների արձանագրությունում լրացուցիչ նշելով գնահատման ենթակա գույքային իրավունքի տեսակը:
- Որոշմամբ նաև սահմանվում է, որ եթե գնահատման ծառայության դիմաց հատուցումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, համապատասխան ծախսերը պլանավորվում և կատարվում են որպես գնում չհանդիսացող ծախսեր:

Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, ներմուծման լիցենզավորման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին N 867-Ն (ընդունված՝ 18.06.2026թ., ուժի մեջ՝ 23.07.2026թ. մինչև 23.01.2027թ.):

- Սույն որոշմամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում: Մասնավորապես, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 ապրանքային դիրքի համապատասխան ծածկագրերին դասվող ցեմենտի ներմուծումը «Բացթողում» ներքին սպառման համար», «Վերամշակում» մաքսային տարածքում» և «Վերամշակում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով իրականացվում է հիմնական լիցենզիաների հիման վրա: Հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև 100 տոննա ցեմենտի ներմուծման համար, իսկ լիցենզիաների տրամադրման լիազոր մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին N 845-Ն (ընդունված՝ 18.06.2026թ., ուժի մեջ մտնելու օրը՝ 19.06.2026թ.)

- Որոշմամբ վերացվել է մանկական գրականության, դպրոցական և ուսումնական հրատարակությունների, ինչպես նաև միաժամանակ որպես գիտական կամ ուսումնական և որպես այլ հրատարակություն դասակարգվող գրականության օտարման գործարքների՝ ԱԱՀ-ից ազատման համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից համապատասխան հաստատման կամ երաշխավորման պահանջը:
- Նախկինում մանկական գրականության օտարումն ազատվում էր ԱԱՀ-ից, եթե տվյալ գրականությունը նախարարության կողմից պաշտոնապես հաստատվել կամ երաշխավորվել էր որպես մանկական, դպրոցական հրատարակությունների դեպքում՝ որպես դպրոցական, իսկ ուսումնական հրատարակությունների դեպքում՝ որպես ուսումնական: Միաժամանակ, այն հրատարակությունները, որոնք կարող էին դասակարգվել և՛ որպես գիտական կամ ուսումնական, և՛ որպես այլ տեսակի հրատարակություն, ԱԱՀ-ից ազատվում էին, եթե նախարարության կողմից պաշտոնապես հաստատվել էին որպես գիտական և (կամ) ուսումնական հրատարակություն: Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ մեծածավալ հրատարակությունների ուսումնասիրությունը և երաշխավորման տրամադրումը ժամանակատար էին, իսկ երաշխավորումները կարող էին տրամադրվել ԱԱՀ հաշվետու ժամանակաշրջանից ավելի երկար ժամկետներում: Արդյունքում օտարված գրականության մասով առաջանում էին ԱԱՀ-ի հաշվարկման խնդիրներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N 799-Ն (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 14.06.2026թ. բացառությամբ դեղերի նմուշառման և պահեստավորման առանձին կարգավորումների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո):

- Փոփոխվել և լրացվել են ՀՀ տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու, ՀՀ տարածքից արտահանելու, ինչպես նաև ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգավորումները:
- Բարեգործական և մարդասիրական ծրագրերի շրջանակներում ներմուծվող դեղերը հանվել են լաբորատոր փորձաքննության ենթակա արտադրանքների շրջանակից: Միաժամանակ այդ դեղերի համար պահպանվել է սերիայի բացթողման պահանջը, քանի որ բարեգործական կամ մարդասիրական ծրագրերի շրջանակներում դեղեր ներմուծող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար նույնպես պարտադիր է դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի առկայությունը: Սահմանվել է նաև, որ բարեգործական և մարդասիրական ծրագրերի շրջանակներում ներմուծվող՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում գրանցված կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից նախատրամադրված դեղերի սերիայի բացթողման ժամանակ որակի հսկում չի իրականացվում:
- Հստակեցվել է չգրանցված դեղերի որակի հսկման կարգը: Չգրանցված դեղի սերիայի որակի հսկման ժամանակ ստուգվելու է դրա համապատասխանությունը «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով հաստատված ցանկում ներառված դեղագրքերի պահանջներին: Միաժամանակ նախատեսվել է, որ համապատասխանության հավաստագրի տրամադրման հիմք կարող է լինել նաև չգրանցված դեղի ներմուծման հավաստագրի առկայությունը:
- Դեղագործական արտադրանքի նմուշառման մասով սահմանվել է, որ մաքսային հսկողության գոտում նմուշառումը հնարավոր է այն դեպքում, երբ մաքսային պահեստը կամ ժամանակավոր պահպանության տարածքն ունի լիազոր մարմնի կողմից տրված դեղերի մեծածախ իրացման լիցենզիա և պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր: Եթե մաքսային պահեստը կամ ժամանակավոր պահպանության տարածքը չունի նշված լիցենզիան և հավաստագիրը, դեղագործական արտադրանքը սահմանը հատելուց հետո մինչև նմուշառումը պետք է տեղափոխվի հայտատուի պահեստ՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով և անհրաժեշտ թույլտվության առկայությամբ:

- Երրորդ երկրից կամ ԵԱՏՄ անդամ երկրից ներմուծվող դեղագործական արտադրանքը հայտատուի պահեստ տեղափոխելուց առաջ մաքսային մարմիններին պետք է ներկայացվի հայտատուի դեղերի մեծածախ իրացման լիցենզիան, իսկ արտադրական նպատակով դեղանյութեր և դեղաբուսական հումք ներմուծելու դեպքում՝ դեղերի արտադրության լիցենզիան:
- Զուգահեռ ներմուծման դեպքում փոփոխվել է նախնական թույլտվության գործընթացը. լիազոր մարմնի հրամանի փոխարեն ներմուծողին տրամադրվելու է համապատասխան գրություն: Բացի այդ, զուգահեռ ներմուծման համապարփակ փորձաքննության համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը լրացվել է արտադրող կազմակերպության կամ իրավատիրոջ կողմից տրված որակի հավաստագրով:
- Վերանայվել է նաև ներմուծման կամ արտահանման հավաստագիր ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Նախատեսվել է ներկայացնել հայտատուի դեղերի մեծածախ իրացման լիցենզիան և Պատշաճ բաշխման գործունեության հավաստագիրը կամ ՊԲԳ դիտարկումների իրականացման նպատակով ներկայացված դիմումի պատճենը: Արտադրական նպատակով դեղերի ներմուծման դեպքում պահանջվում է դեղերի արտադրության լիցենզիա և պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր:

ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին N 805-Ն (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 05.06.2026թ.)

- Փոփոխվել են արտահանման և վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի ձևերը՝ նախատեսելով մեկից ավելի անուն արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան հավաստագրի հավելվածում ներառելու հնարավորություն:
- Գործող կարգավորման համաձայն՝ բուսասանիտարական հավաստագրի ստացման հայտը ներկայացվում է հավաստագիրը տրամադրվում է ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» համակարգի միջոցով՝ բացառությամբ անհաղթահարելի ուժի առկայության և արտահանման երկրում փաստաթուղթը թղթային եղանակով ներկայացնելու անհրաժեշտության դեպքերի:
- Բուսասանիտարական հավաստագրերի էլեկտրոնային տրամադրման նպատակով մշակվել է «Արմֆիտոս» էլեկտրոնային տեղեկատվական համակարգը, որը ինտեգրվել և փորձարկվել է ռուսական «Արգուս-ֆիտո» տեղեկատվական համակարգի հետ:

Հայաստանի Հանրապետության տարածքից ջերմատնային արտադրության թարմ պտուղաբանության և ծաղիկների արտահանման աջակցության միջոցառումը հաստատելու մասին N 800-Ն որոշում (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 05.06.2026թ., տարածվում է 2026 թվականի հունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը ժագած հարաբերությունների վրա):

- Հաստատվել է ՀՀ տարածքից ջերմատնային արտադրության թարմ պտուղաբանության և ծաղիկների արտահանման աջակցության միջոցառում, որի նպատակն է արտահանված արտադրանքի համար փոխհատուցում տրամադրելու միջոցով բարձրացնել այդ արտադրանքի մրցունակությունը:
- Միջոցառման շահառու կարող են լինել ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք, որոնք 2026 թվականի հունիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը ՀՀ տարածքից իրականացրել են ջերմատնային արտադրության համապատասխան արտադրանքի արտահանում:
- Փոխհատուցումը տրամադրվում է հետևյալ չափերով՝ ելակի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար՝ 770 դրամ, լոլիկի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար՝ 275 դրամ, պղպեղի յուրաքանչյուր 1 կիլոգրամի համար՝ 400 դրամ, ծաղիկի յուրաքանչյուր 1 հատի համար՝ 37 դրամ:
- Փոխհատուցում ստանալու համար տնտեսավարող սուբյեկտը 2026 թվականի հուլիսի 1-ից հետո Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում դիմում: Դիմումին կցվում են ապրանքի տարանցման հայտարարագիրը կամ ապրանքների հայտարարագրերի պատճենները, ինչպես նաև հաշվարկային փաստաթուղթը՝ հաշիվ ապրանքագիրը:
- Դիմումը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտի և նախարարության միջև կնքվում է փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագիր: Կազմվում է եզրակացություն, որի հիման վրա, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, փոխհատուցման գումարը տնտեսավարող սուբյեկտին փոխանցվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Դիմումը մերժվում է, եթե չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը կամ դրանցում առկա տեղեկատվությունը թերի է, եթե ներկայացվել են միջոցառմամբ չնախատեսված ապրանքներ: Մերժման դեպքում տնտեսավարող սուբյեկտը կարող է 7 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել մերժման հիմքերը և ներկայացնել նոր դիմում:
- Միջոցառման ընդունումը պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության կողմից կիրառվող սահմանափակումների պայմաններում արտահանման շուկաների դիվերսիֆիկացման նպատակով արտահանողներին աջակցություն տրամադրելու անհրաժեշտությամբ:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին N 825-Ն (ընդունված՝ 11.06.2026թ., ուժի մեջ մտնելու օրը՝ ընդունված՝ 11.06.2026թ., ուժի մեջ՝ 12.06.2026թ.)

- Փոփոխվել են չսպասարկվող ուղղություններով օդային փոխադրումների իրականացման համար «Պետական տուրքի մասին» օրենքով նախատեսված արտոնությունների կիրառման պայմաններին վերաբերող կարգավորումները:
- Մասնավորապես, փոփոխվել է չվերթերի հաճախականության նվազագույն պահանջը: Նախկին կարգավորմամբ ավիափոխադրողը պարտավոր էր IATA ամառային ժամանակահատվածում իրականացնել առնվազն 28, իսկ IATA ձմեռային ժամանակահատվածում՝ առնվազն 20 չվերթ: Նոր կարգավորմամբ ավիափոխադրողը չվերթի մեկնարկի օրվանից IATA ամառային և IATA ձմեռային ժամանակահատվածում պետք է իրականացնի ընդհանուր առմամբ առնվազն 40 չվերթ: Նշված քանակից նվազեցվում են անհաղթահարելի ուժի հետևանքով չիրականացված չվերթերը:
- Փոփոխությունը պայմանավորված է ավիափոխադրումների սեզոնային բնույթով: Գործնականում որոշ ուղղություններով ուղևորահոսքը և չվերթերի պահանջարկը կարող են կենտրոնանալ տարվա միայն մեկ սեզոնի ընթացքում, ինչի հետևանքով ավիափոխադրողը, չնայած տարեկան կտրվածքով զգալի թվով չվերթեր իրականացնելուն, նախկինում կարող էր չբավարարել առանձին սեզոնի համար սահմանված նվազագույն շեմը և չօգտվել օրենքով նախատեսված արտոնությունից:
- Միաժամանակ սահմանվել է, որ ավիափոխադրողներին տրամադրված արտոնությունների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ՀՀ-ում քաղաքացիական ավիացիայի բնագավառի քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության պաշտոնական կայքում: Փոփոխությունը պայմանավորված է թույլտվությունների տրամադրման գործընթացի էլեկտրոնային ձևաչափին անցմամբ:
- Փոփոխվել է նաև օրենքով 36 ամսով տրամադրվող արտոնության ժամկետի երկարաձգման կարգը: Եթե նախկին կարգավորումը նախատեսում էր արտոնության ժամկետի 24 ամսով մեկանգամյա երկարաձգում, ապա նոր կարգավորմամբ այն կարող է երկարաձգվել մինչև երկու անգամ՝ յուրաքանչյուր անգամ 24 ամսով: Երկարաձգման հարցը քննարկվում է լիազոր մարմնի կողմից՝ հաշվի առնելով տվյալ ուղղությամբ արտոնության կիրառման արդյունքում ուղևորահոսքի ցուցանիշը և այդ ցուցանիշի՝ տնտեսության վրա ազդեցության վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության եզրակացությունը:

ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N 98-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին N 803-Ն որոշում (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 05.06.2026թ.)

- Որոշմամբ ընդլայնվել է արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագրով փոխհատուցման ենթակա ապրանքների շրջանակը:
- Օժանդակության տրամադրման ծրագիրը նպատակ ունի խթանել ՀՀ արտադրողների կողմից ՀՀ ծագում ունեցող ապրանքների արտահանումը դեպի Եվրոպական միության, Միացյալ Թագավորության և Կանադայի շուկաներ՝ ներմուծող երկրում գանձված մաքսատուրքի փոխհատուցման միջոցով: Մինչև փոփոխությունը ծրագրի շրջանակում փոխհատուցման ենթակա ապրանք էր համարվում միայն մշակող արդյունաբերության արտադրանքը:
- Փոփոխությամբ փոխհատուցման ենթակա ապրանքների շրջանակում ներառվել է նաև «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» տնտեսական գործունեության ոլորտի՝ ՏԳՏԴ A 01.1 խմբի արտադրանքը, բացառությամբ ՏԳՏԴ A 01.11, A 01.12, A 01.14 և A 01.15 դասերի արտադրանքի, ինչպես նաև ՏԳՏԴ A 01.2 խմբի արտադրանքը:

Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0 ծածկագրին դասվող ցորենի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին N 824-Ն (ընդունված՝ 11.06.2026թ., ուժի մեջ՝ 2026 թվականի հուլիսի 7-ից և գործում է մինչև 2027 թվականի հունվարի 7-ը ներառյալ)

- Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0 ծածկագրին դասվող ցորենի արտահանման նկատմամբ սահմանված ժամանակավոր արգելքը երկարաձգվել է ևս 6 ամսով՝ 2026 թվականի հուլիսի 7-ից մինչև 2027 թվականի հունվարի 7-ը ներառյալ:
- Նշված ապրանքատեսակի արտահանման նկատմամբ 6-ամսյա ժամանակավոր արգելք էր սահմանվել նաև ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1931-Ն որոշմամբ, որի գործողության ժամկետն ավարտվում է 2026 թվականի հուլիսի 6-ին: Նոր որոշմամբ արտահանման արգելքը շարունակվում է առանց ժամանակային ընդհատման:
- Արգելքը չի տարածվում ՀՀ ներմուծված և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ՀՀ-ից արտահանվող ցորենի նկատմամբ:
- Որոշման ընդունումը պայմանավորված է ՀՀ պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8511 10 000 1 և 8511 10 000 9 ծածկագրերին դասվող կայծից բոցավառումով վառքի մոմերի՝ առանց հակազնագցման տուրքի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին N 789-Ն (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 05.06.2026թ., գործում է 5 տարի ժամկետով)

- Սահմանվել է, որ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8511 10 000 1 և 8511 10 000 9 ծածկագրերին դասվող կայծից բոցավառումով վառքի մոմերը կարող են ներմուծվել ՀՀ տարածք՝ առանց հակազնագցման տուրքի վճարման՝ տարեկան մինչև 500 հազար հատ չափաքանակով:
- Արտոնությունը սահմանվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2026 թվականի ապրիլի 7-ի N 46 որոշման հիման վրա: Որոշումը գործում է 5 տարի ժամկետով, իսկ դրա գործողությունը տարածվում է 2026 թվականի մայիսի 10-ից «Բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով գրանցված մաքսային հայտարարագրերի նկատմամբ:
- Առանց հակազնագցման տուրքի վճարման ապրանքը ներմուծելու համար հայտարարատուն ապրանքի ներմուծումից հետո ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված ժամկետում համապատասխան մաքսային մարմին է ներկայացնում մաքսային հայտարարագիր: Մաքսային հայտարարագրի՝ մաքսային մարմինների հայտարարագրման ավտոմատ համակարգի կողմից գրանցումը համարվում է արտոնության կիրառման համար լիազոր մարմնի կողմից տրամադրված թույլտվություն: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան որոշման կիրարկման համար լիազոր մարմին է սահմանվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեն:
- Նախնական մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքի հայտարարագրի գրանցում է համարվում ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով նախատեսված լրացուցիչ տեղեկությունները ներկայացնելու արդյունքում մաքսային մարմինների կողմից նախնական մաքսային հայտարարագրում կատարված ճշգրտումների, փոփոխությունների կամ լրացումների գրանցումը:
- Տարեկան 500 հազար հատ չափաքանակի շրջանակներում ապրանքների բացթողումն առանց հակազնագցման տուրքի վճարման իրականացվում է ժամանակագրական սկզբունքով՝ ըստ մաքսային հայտարարագրերի գրանցման հերթականության, իսկ ներմուծվող ապրանքների քանակական հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ հայտարարագրման համակարգի միջոցով:

- Միաժամանակ գրանցված մաքսային հայտարարագրերի դեպքում արտոնությունից օգտվելու հնարավորությունը տրամադրվում է այն ապրանքներին, որոնք ավելի վաղ են հատել ՀՀ մաքսային սահմանը: Եթե տարեկան արտոնյալ չափաքանակը սպառվել է մաքսային հայտարարագրի գրանցման կամ ապրանքի բացթողման պահին, առանց հակազնագցման տուրքի վճարման համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցումը կամ ապրանքի բացթողումը մերժվում է:

ՀՀ-ում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով հայաստանի հանրապետության տարածքով երրորդ երկրների տարածք տարանցման նպատակով կամ առանց տարանցման հայաստանի հանրապետության տարածք մուտք գործող ճանապարհային հարկ վճարողներին հայաստանի հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկ վճարողների նկատմամբ փոխադարձության սկզբունքով ճանապարհային հարկի նվազ դրույքաչափ կիրառելու մասին N 787-Ն (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 14.06.2026):

- Որոշմամբ ՀՀ հարկային օրենսգրքի 191-րդ հոդվածի 1.1-ին մասի հիման վրա սահմանվել են այն երկրները, տրանսպորտային միջոցների տեսակը և քանակը, որոնց դեպքում ճանապարհային հարկ վճարողներն ազատվում են ճանապարհային հարկի վճարումից: Արտոնությունը տարածվում է այն բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների վրա, որոնք բավարարում են հետևյալ երկու հիմքներին.
 1. Եթե բեռնատար ավտոտրանսպորտային միջոցները գրանցված են Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության և Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի անդամ պետություններում և փոխադրումները իրականացվում են միջպետական բեռնափոխադրումներ՝ «BSEC Permit» կամ «CEMT» բազմակողմ քվտաների համակարգերի թույլտվություններով՝ մուտք գործելով ՀՀ տարածք՝ ՀՀ տարածքով երրորդ երկրներ տարանցման նպատակով կամ առանց տարանցման:
 2. Եթե բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգված կազմում է մինչև 44 տոննա:
- Որոշման ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «BSEC Permit» և «CEMT» թույլտվությունների համակարգերով բեռնափոխադրումներ իրականացնող հայկական փոխադրողների նկատմամբ համապատասխան անդամ պետություններում կիրառվում են ճանապարհային հարկի արտոնություններ, մինչդեռ նույն համակարգերով ՀՀ տարածք մուտք գործող այլ պետությունների փոխադրողների նկատմամբ ՀՀ-ում ճանապարհային հարկի արտոնություն չէր կիրառվում:

Կանխավճարների վերադարձի համար ներկայացված դիմումի մերժման և կանխավճարների վերադարձի մերժման դեպքերը սահմանելու մասին N 917-Ն որոշում (ընդունվել է՝ 25.06.2026 թ., ուժի մեջ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից):

- Սահմանվել են մաքսային միասնական հաշվին առկա կանխավճարների վերադարձի համար ներկայացված դիմումի մերժման, ինչպես նաև կանխավճարների վերադարձի մերժման դեպքերը: Կանխավճարների վերադարձի դիմումը մերժվում է, եթե՝
 1. դիմումը ներկայացվել է լիազորություն չունեցող անձի կողմից,
 2. դիմումը չի պարունակում մաքսային մարմնի կողմից սահմանված տեղեկությունները:
- Միաժամանակ, դիմումն ընդունված լինելու դեպքում կանխավճարների վերադարձը մերժվում է ամբողջությամբ կամ համապատասխան գումարի մասով, եթե՝
 1. վճարողի անվամբ առկա են չկատարված մաքսային պարտավորություններ, իսկ վերադարձից հետո միասնական հաշվին մնացող կանխավճարի գումարը բավարար չէ դրանց մարման համար,
 2. վճարողի անվամբ առկա են ժամկետանց մաքսային պարտավորություններ,
 3. վերադարձման համար պահանջվող գումարը գերազանցում է դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ մաքսային միասնական հաշվին առկա կանխավճարի գումարը՝ գերազանցող մասով:
- Այսպիսով, կարգավորումը տարանջատում է դիմումի՝ ձևական և ընթացակարգային հիմքերով մերժումը կանխավճարի փաստացի վերադարձի մերժումից, որը պայմանավորված է վճարողի մաքսային պարտավորությունների առկայությամբ կամ վերադարձման ենթակա գումարի անբավարարությամբ:

Կանխավճարների՝ մաքսային միասնական հաշվին մուտքագրման եղանակները և կարգը, ինչպես նաև վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկությունների կազմը, ժամկետը և կարգը սահմանելու մասին N 921-Ն որոշում (ընդունվել է՝ 25.06.2026 թ., ուժի մեջ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-379-Ն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից)

- Սահմանվել են կանխավճարների՝ մաքսային միասնական հաշվին մուտքագրման եղանակներն ու ընթացակարգը Կանխավճարները մուտքագրվում են անկանխիկ եղանակով՝ մաքսային մարմինների էլեկտրոնային համակարգի միջոցով:

- Մուտքագրումը կարող է իրականացվել՝
 1. վճարողի բանկային հաշվից վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով, այդ թվում՝ պետական վճարումների էլեկտրոնային հարթակով (e-payments),
 2. մաքսային անձնական հաշվի քարտում հաշվառված պարտավորությունների վերահաշվարկման արդյունքում,
 3. համապատասխան գանձապետական ավանդային հաշվից՝ մաքսային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով ներդրված դրամական միջոցները մաքսային միասնական հաշվին փոխանցելու միջոցով:
- Մաքսային միասնական հաշվին մուտքագրված կանխավճարներն արտացոլվում են վճարողի մաքսային անձնական հաշվի քարտում: Դրամական միջոցների մուտքագրումը կատարված է համարվում համապատասխան վճարային փաստաթղթերը կամ տեղեկությունները մաքսային մարմիններին հասանելի դառնալու պահից: Սահմանվել է, որ վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպությունները մաքսային մարմիններին տրամադրում են վճարման փաստը հաստատող անդորրագիրը կամ համակարգերի փոխազդեցության արդյունքում նույնականացված տեղեկությունները:

Միավորված ազգերի կազմակերպության ճամփորդական փաստաթուղթ (United Nations Laissez-Passer) և Եվրոպական միության ճամփորդական փաստաթուղթ (European Union Laissez-Passer) կրող անձանց համար Հայաստանի Հանրապետություն առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ սահմանելու մասին N 810-Ն որոշում (ընդունված՝ 11.06.2026 թ., ուժի մեջ՝ 21.06.2026թ.)

- Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպական միության ճամփորդական փաստաթղթեր՝ համապատասխանաբար United Nations Laissez-Passer և European Union Laissez-Passer կրող անձանց համար սահմանվել է ՀՀ առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ:
- Նոր կարգավորմամբ ՄԱԿ-ի և ԵՄ-ի համապատասխան ճամփորդական փաստաթղթեր կրող անձինք կարող են առանց մուտքի վիզայի այցելել և գտնվել ՀՀ տարածքում առավելագույնը 180 օր՝ մեկ տարվա ընթացքում:
- Հիմնավորման համաձայն՝ կարգավորման անհրաժեշտությունը դիտարկվել է նաև 2026 թվականին ՀՀ-ում նախատեսված COP17 համաժողովի անցկացման համատեքստում, որի կապակցությամբ ակնկալվում է ՄԱԿ-ի և ԵՄ-ի մարմինների ներկայացուցիչների՝ ՀՀ այցելությունների հաճախակիացում:

Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին **N 811-Ն** (ընդունված՝ 11.06.2026թ., ուժի մեջ՝ 2026 թվականի հուլիսի 6-ից և գործում է մինչև 2027 թվականի հունվարի 6-ը ներառյալ)

- ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման նկատմամբ կիրառվող ժամանակավոր արգելքը երկարաձգվել է ևս 6 ամսով՝ մինչև 2027 թվականի հունվարի 6-ը ներառյալ:
- Արգելքը տարածվում է ինչպես ՀՀ տարածքից արտահանման, այնպես էլ ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխման նկատմամբ: Որոշման ընդունումը պայմանավորված է առանց արտանետումների չեզոքացման համակարգի տրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների նվազեցման կանխման անհրաժեշտությամբ:

ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին **N 776-Ն (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 05.06.2026թ.)**

- Փոփոխությամբ՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում («e-draft») ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում տեղադրված հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար համակարգ են մուտք գործելու «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով:

ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 1302-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին **N 916-Ն (ընդունվել է՝ 25.06.2026 թ., ուժի մեջ է մտնում՝ 26.06.2026 թ.)**

- Փոփոխվում է ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի հսկողության գործող կարգը՝ հստակեցնելով Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի լիազորությունները: Սահմանվել է, որ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կնքված պայմանագրերի շրջանակներում պետական պատվիրատուի գործառույթներն իրականացնում է նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեն: Կոմիտեի հիմնական նպատակը Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կնքված պայմանագրերի շրջանակներում ռազմական նշանակության ապրանքի և գույքի որակի ստուգումն է:

ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2207-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին **N 887-Ն որոշում (ընդունված՝ 18.06.2026, ուժի մեջ՝ 19.06.2026)**

- Սահմանվել են այն դեպքերը, երբ ջրօգտագործողներն ազատվում են էկոլոգիական թողքի հաշվառման նպատակով էկոլոգիական թողքի կետում ջրաչափիչ սարք տեղադրելու պահանջից: Այդ բացառությունները վերաբերում են՝
 1. անդրսահմանային գետահատվածներից ջրօգտագործմանը,
 2. այն դեպքերին, երբ ջրառի ծավալը չի գերազանցում գետի բազմամյա բնական միջին հոսքի 5%-ը՝ բացառությամբ էներգետիկ, ոռոգման ջրամատակարարման և ջրի տեղափոխման նպատակներով ջրօգտագործման,
 3. ջրառի կետի և գործող հիդրոլոգիական դիտակետի գետահատվածների հիդրոլոգիական համընկնման դեպքերին, եթե համապատասխան դիտակետում տեղադրվում է ջրի մակարդակի ավտոմատ գրանցման և տվյալների առցանց փոխանցման կամ արխիվացման համակարգ, և իրականացվում է դիտակետի արդիականացում,
 4. գործող հիդրոլոգիական դիտակետերի բացակայության կամ դրանց հիդրոլոգիական անհամապատասխանության դեպքերին, եթե ջրառի կետին մոտ գետահատվածում տեղադրվում է ջրի մակարդակի ավտոմատ գրանցման և տվյալների առցանց փոխանցման կամ արխիվացման համակարգ:
- Եթե կիրառվում է տվյալների արխիվացման համակարգ, ապա արխիվացված ամսական տվյալները պետք է լիազոր մարմնին ներկայացվեն մինչև հաջորդող ամսվա 10-րդ օրը: Նախատեսվել է ջրաչափիչ սարքը այլընտրանքային վայրում տեղադրելու հնարավորություն. այս դեպքում լիազոր մարմինը համաձայնություն է տալիս, եթե ապահովվում է ջրի ամբողջական և ճշգրիտ հաշվառումը:
- Ջրաչափիչ սարքի վերաբերյալ ներկայացվող տվյալները ներառում են սարքի աշխարհագրական կոորդինատները, համապատասխան հարթակին միանալու նույնականացման տվյալները և այլն: Ջրօգտագործողի կողմից ջրաչափիչ սարքի կնիքը պոկելու դեպքում վերջինս պարտավոր է անմիջապես տեղեկացնել լիազոր մարմնին: Ջրաչափիչ սարքերի տեղադրման պահանջները չկատարելը հանգեցնում է վարչական պատասխանատվության:
- Մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը տեղադրված և կնքված՝ տվյալների առցանց փոխանցում ապահովող ջրաչափիչ սարքերը կարող են շարունակել շահագործվել առանց փոխարինման և վերակնքման, եթե համապատասխանում են սահմանված պահանջներին, հակառակ դեպքում՝ ենթակա են փոխարինման և վերակնքման:

ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին N 933-Լ (ընդունված՝ 25.06.2026 թ., ուժի մեջ՝ 27.06.2026 թ.)

- Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում ջերմատնային տնտեսությունների համար սահմանվում է լրացուցիչ արտոնություն: Ֆինանսական կառույցի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքներով ծրագրի պահանջներին համապատասխան կառուցված ջերմատն և 2026 թվականի ընթացքում գյուղատնտեսական արտադրանք իրացրած շահառուի դիմումի հիման վրա՝
 - լիզինգի մարման ժամկետը երկարաձգվում է 6 ամսով,
 - լիզինգի հիմնական գումարի մարման և տոկոսադրույքի համար տրամադրվում է լրացուցիչ 6 ամիս արտոնյալ ժամկետ:
- Արտոնությունից օգտվելու համար շահառուն պետք է մինչև 01.09.2026թ. դիմի ֆինանսական կառույցին՝ ներկայացնելով 2026 թվականին իրացված գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկանք, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ համապատասխան հայտարարագիր:

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1284-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին N 885-Լ որոշում (ընդունված՝ 18.06.2026 թ., ուժի մեջ՝ 19.06.2026 թ.)

- Որոշմամբ լրացուցիչ արտոնություն է նախատեսվում ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրի այն շահառուների համար, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին՝ նախարարության կողմից սահմանված կարգով մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը իրականացված մոնիթորինգի արդյունքներով ծրագրի պահանջներին համապատասխան կառուցել են ջերմատուն և 2026 թվականի ընթացքում իրացրել են գյուղատնտեսական արտադրանք: Այս դեպքում շահառուի դիմումի հիման վրա ֆինանսական կառույցը կարող է՝
 - ծրագրով սահմանված վարկի մարման առավելագույն ժամկետը երկարաձգել 6 ամսով,
 - ծրագրով արդեն նախատեսված արտոնյալ ժամկետից բացի տրամադրել լրացուցիչ 6 ամիս արտոնյալ ժամկետ վարկի մայր գումարի և տոկոսադրույքի մարման համար:
- Արտոնությունից օգտվելու համար շահառուն կարող է դիմել մինչև 01.09.2026թ.: Դիմումին կցվում են Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանքը՝ 2026 թվականին իրացված գյուղատնտեսական արտադրանքի վերաբերյալ, և նախարարության տեղեկանքը՝ ջերմատունը կառուցված լինելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունից երկաթի և չեգիրված պողպատի, երկաթից կամ չեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով պողպատի, զտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին N 878-Ն (ընդունված՝ 18.06.2026թ., գործում է 04.07.2026թ.-ից մինչև 04.01.2027թ.)

- Որոշմամբ երկաթի և չեգիրված պողպատի, դրանցից կիսապատրաստուկների, այլ լեգիրված պողպատի կիսապատրաստուկների, զտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ արտահանման նկատմամբ սահմանվել է ժամանակավոր սահմանափակում:
- Հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի համար: Միաժամանակ, մեկ լիցենզիա կարող է տրամադրվել նաև մեկ տոննայից ավելի քանակի համար, եթե յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի համար վճարվել է օրենքով սահմանված պետական տուրքը:
- Սահմանափակումը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» կամ «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ներմուծված և հետագայում վերաարտահանվող ապրանքների, ինչպես նաև պայմանագրի հիման վրա ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստան տեղափոխված և հետագայում երրորդ երկրներ արտահանվող համապատասխան ապրանքների նկատմամբ:

ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի N 1253-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին N 781-Ն (ընդունված՝ 04.06.2026թ., ուժի մեջ՝ 14.06.2026թ.)

- Հստակեցվել է միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթով չնախատեսված նոր երթուղիների փոխադրավարձի հաշվարկման հիմքը: Սահմանվել է հաշվարկի համար կիրառվող տվյալների կոնկրետ հիմքը, այն է՝ մրցույթի արդյունքները հաստատող լիազոր մարմնի ղեկավարի իրավական ակտը: Մրցույթով չնախատեսված նոր երթուղու փոխադրավարձը հաշվարկելիս հիմք են ընդունվում մրցույթի արդյունքները հաստատող լիազոր մարմնի ղեկավարի իրավական ակտով սահմանված երթուղիների երկարությունների և փոխադրավարձերի տվյալները:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի մարտի 29-ի N 902-Լ հրամանում փոփոխություն կատարելու մասին N926-Լ հրաման (ընդունված՝ 01.04.2026 թ., ուժի մեջ՝ 01.07.2026 թ.)

- ԵՏՄ մաքսային օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ անձի կողմից պահպանվել են ապրանքները հայտագրված մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները կամ այն ապրանքների առանձին կատեգորիաների օգտագործման համար սահմանված պայմանները, որոնք օրենսգրքին համապատասխան ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այնպիսի պայմանը, ինչպիսին է արգելքների և սահմանափակումների պահպանումը «Միության մասին» պայմանագրին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, կարող է հաստատվել ապրանքների բացթողումից հետո:
- Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ կառավարության 16.09.2026թ. N1427-Ն որոշման 1-ին կետով սահմանվել է, որ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող և հետագայում ԵՏՄ անդամ այլ պետություններ արտահանվող ապրանքների համար ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմիններին ներկայացվում են միայն այն դեպքում, երբ համապատասխանության գնահատման փաստաթղթերով ներմուծման ենթակա ապրանքներն արտահանվում են ԵՏՄ անդամ այլ պետություններ՝ բացառությամբ որոշմամբ սահմանվող հավելվածում ներառված ցանկում ընդգրկված տեխնիկական կանոնակարգերի, որոնց համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմիններին պետք է ներկայացվեն ԵՏՀ խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպման ժամանակ: Միաժամանակ, 28.03.2024թ. N422-Ն որոշմամբ սահմանվել է, որ ԵՏՀ խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպելիս վերոնշյալ որոշման հավելվածով սահմանված ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու պահանջը կարող է չկիրառվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանով սահմանված դեպքերում:

- ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի մարտի 29-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու պահանջը չկիրառելու մասին» N902-Լ հրամանով պարբերաբար սահմանվել են, թե վերոնշյալ որոշման հավելվածի որ կետերով նախատեսված տեխնիկական կանոնակարգերի մասով համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը ներմուծման ժամանակ մաքսային մարմին ներկայացնելու պահանջը կարող է չկիրառվել:
- Էկոնոմիկայի նախարարի 03.04.2026թ. N926-Լ հրամանով փոփոխություն է կատարվել N902-Լ հրամանում, համաձայն որի՝ թարմացվել է տեխնիկական կանոնակարգերի այն ցանկը, որոնց մասով 2026թ. հուլիսի 1-ից շարունակում է դեռևս չգործել համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը ներմուծման ժամանակ մաքսային մարմին ներկայացնելու պահանջը (հավելվածի 1-4-րդ, 8-11-րդ, 13-րդ, 15-17-րդ, 20-22-րդ և 24-րդ կետեր), ինչը նշանակում է, որ 2026թ. հուլիսի 1-ից սկսած՝ նշված պահանջը պարտադիր է հետևյալ տեխնիկական կանոնակարգերի շրջանակում ներմուծվող հետևյալ ապրանքներին՝
 1. օծանելիքակոսմետիկական արտադրանք (ՄՄ ՏԿ 009/2011),
 2. մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերք (ՄՄ ՏԿ 023/2011),
 3. հատուկ նշանակության սննդամթերքի որոշ տեսակներ, այդ թվում՝ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սնունդ (ՄՄ ՏԿ 027/2012),
 4. ծխախոտային արտադրանք (ՄՄ ՏԿ 035/2014),
 5. փաթեթավորված խմելու ջուր, այդ թվում՝ բնական հանքային ջուր (ՄՄ ՏԿ 044/2017):
- Այսպիսով, 2026 թվականի հուլիսի 1-ից երրորդ երկրներից ներմուծվող և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող վերոնշյալ ապրանքների համար մաքսային մարմիններին անհրաժեշտ է ներկայացնել նաև համապատասխանության գնահատման փաստաթուղթ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին **N 908-Ա**

- Կառավարությունը հավանություն է տվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին:
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում առաջարկվող փոփոխություններով ներդրվում է բջջային հեռախոսների միջազգային նույնականացուցիչների՝ IMEI կոդերի պետական գրանցման և վերահսկողության համակարգ: Օրենքում սահմանվում են «բջջային հեռախոս», «IMEI», «IMEI շտեմարան», «IMEI շտեմարանի կանոնակարգ» և «Ադմինիստրատոր» հասկացությունները: Բջջային հեռախոս է համարվելու հանրային շարժական էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում աշխատող վերջնակետային սարքավորումը, իսկ պլանշետները, մոդեմները, սմարթ ժամացույցները, ռոտեթները, IoT սարքերը և նման այլ սարքերը այդ հասկացության մեջ չեն ներառվելու:
- Նախատեսվում է ստեղծել IMEI միասնական շտեմարան, որը պետք է պարունակի բջջային հեռախոսների IMEI կոդերի, դրանք գրանցողների և բջջային հեռախոսների օրինական շրջանառության վերաբերյալ տվյալներ: Շտեմարանի կանոնակարգը հաստատելու է Կառավարությունը, իսկ իրավասու մարմինը պետք է ապահովի IMEI պետական գրանցումը թվային անվտանգ միջավայրում:
- Շարժական բջջային կապի օպերատորի համար սահմանվում է պարտականություն՝ մերժել կամ կասեցնել բջջային կապի ծառայության մատուցումը այն բջջային հեռախոսին, որի IMEI կոդը օրենքով սահմանված դեպքերում գրանցված չէ: Այսինքն՝ համակարգի գործարկումից հետո չգրանցված IMEI ունեցող համապատասխան հեռախոսների ակտիվացումը բջջային ցանցում կարող է սահմանափակվել:
- Առանձին կարգավորվում են IMEI շտեմարանի կառավարչի և Ադմինիստրատորի հարաբերությունները: Ադմինիստրատորը լինելու է գործող շարժական բջջային կապի ցանցի օպերատորների կողմից համատեղ հիմնադրված կազմակերպություն: Այն ապահովելու է շտեմարանի տեխնոլոգիական միջավայրի ստեղծումը, սպասարկումը, օպերատորների համար հավասար հասանելիությունը, այլ շտեմարանների հետ տվյալների փոխանակումը և շտեմարանի շուրջօրյա անխափան աշխատանքը:
- Նախատեսվում է նաև, որ շարժական բջջային կապի օպերատորը IMEI շտեմարանի ձևավորման և շահագործման նպատակով Ադմինիստրատորին տրամադրելու է իր ցանցին միացված բջջային հեռախոսների, դրանք օգտագործող հաճախորդների, IMEI կոդերի և SIM/eSIM համարների վերաբերյալ տվյալները:
- Վերջնական օգտագործողների համար սահմանվում է պարտականություն՝ օրենքով սահմանված ժամկետում գրանցել անձնական օգտագործման նպատակով անձամբ, փոստային կամ սուրհանդակային առաքմամբ, էլեկտրոնային առևտրի հարթակով կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծված այն բջջային հեռախոսների IMEI կոդերը, որոնք արտադրված են IMEI պետական գրանցման մեկնարկի տարվա կամ դրան նախորդող տարվա ընթացքում: Եթե հեռախոսն ունի մեկից ավելի IMEI, գրանցվում են բոլոր IMEI կոդերը՝ ներմուծման տվյալ դեպքի համար մեկ պետական տուրքի դրույքաչափով: Սահմանվում են նաև տարբերակված պետական տուրքի դրույքաչափեր՝ կախված նրանից, թե արդյոք անձը կամ բջջային հեռախոսը վերջին 90 օրվա ընթացքում հատել է ՀՀ պետական կամ ԵԱՏՄ սահմանը, տվյալ տարվա ընթացքում գրանցվող հեռախոսը առաջինն է, թե երկրորդը կամ հաջորդը, ինչպես նաև՝ հեռախոսը արտադրված է գրանցման մեկնարկի տարվա, թե նախորդ տարվա ընթացքում: Եթե սահմանը հատելու օրվանից անցել է 90 օր, կիրառվելու է առանձին դրույքաչափ:
- «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում առաջարկվում է սահմանել, որ բջջային հեռախոսների ներմուծում և վաճառք իրականացնող վաճառողները պարտավոր են մինչև վաճառքը գրանցել համապատասխան բջջային հեռախոսների IMEI կոդերը և վճարել պետական տուրքը: Այդ պահանջը վերաբերում է պետական գրանցման մեկնարկի տարվա կամ դրան նախորդող տարվա ընթացքում ՀՀ ներմուծված և նույն ժամանակահատվածում արտադրված բջջային հեռախոսներին: Նույն օրենքով նաև նախատեսվում է, որ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը բջջային հեռախոսների ներմուծում և վաճառք կարող են իրականացնել միայն «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով հաշվառված իրավունք ունենալու դեպքում:
- Հիմնական կարգավորումները ուժի մեջ են մտնելու 01.01.2027 թվականից: Մինչև այդ, Հայաստան ներմուծված կամ վերջնական օգտագործողների կողմից օգտագործվող բջջային հեռախոսները համարվելու են IMEI շտեմարանում գրանցված՝ առանց պետական տուրքի վճարման:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերն ընդունվել են երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ*:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթով սահմանվել են ինքնակամ կառույցների օրինականացման նոր կարգավորումներ և զգալիորեն բարձրացվել են դրանց համար գանձվող տեղական տուրքերը:
- Նախատեսվում է ինքնակամ կառույցների օրինականացման ևս մեկ հնարավորություն ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ինքնակամ կառույցների համար, որոնք կարող են կառուցված լինել նաև օրենքով սահմանված ժամկետից հետո: Ընդ որում, երկարաձգվել է սեփականության հողամասերում առկա ամբողջությամբ ինքնակամ կառույցների հաշվառման և Կադաստրի կոմիտե փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը:
- Տուրքի չափը Երևան քաղաքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի համար սահմանվել է նախագծման թույլտվության տեղական վճարի եռաթափատիկի, շինարարության թույլտվության տեղական տուրքի եռապատիկի հանրագումարի և 100 միլիոն դրամի չափով:
- Այլ մարզերում տուրքի չափը սահմանվել է նույն հաշվարկային բանաձևով (տեղական վճարի և տուրքի եռապատիկների հանրագումար) և 50 միլիոն դրամի չափով:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նպատակ ունենալով մի կողմից նվազեցնել մարդու առողջությանը վնաս հասցնող ապրանքների սպառումը, մյուս կողմից՝ ուղղակի հարկերի (շահութահարկ, եկամտային հարկ) բեռի իջեցման դիմաց բարձրացնել անուղղակի հարկերի (ակցիզային հարկ) բեռը, ինչպես նաև ակցիզային հարկի դրույքաչափերի՝ ԵԱՏՄ ինդիկատիվ դրույքաչափերին ու հարևան պետությունների դրույքաչափերին մոտարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օրենսգրքում կատարվել են մի շարք փոփոխություններ:

- Ինդեքսավորում. սահմանվել է ակցիզային հարկի դրույքաչափի (որը 2027-2029թթ. յուրաքանչյուր տարվա համար առանձին չէ) բազային գործակցի տարեկան 3 տոկոսանոց աճ
- Դրույքաչափերի տարեկան բարձրացում ավանդական ծխախոտի, տաքացվող ծխախոտ, նարգիլեի, էլեկտրոնային ծխախոտի (հեղուկների) համար:
- Նոր հարկվող ապրանքատեսակ՝ նիկոտինային տոպրակներ Մինչ այժմ չհարկվող նիկոտինային տոպրակները (Nicotine Pouches) այսուհետ կհարկվեն:
- Մրգային օղիների հարկային բեռի նվազեցում ի տարբերություն այլ ապրանքների՝ պտուղներից և հատապտուղներից պատրաստված օղիների:
- Կոնյակի համար կսահմանվի միասնական դրույքաչափ՝ 1 լիտր (100%-անոց սպիրտի վերահաշվարկով) կոնյակի համար անկախ դրա հնացման տարիքից:
- Արդյունաբերողներին տրվող փոխհատուցման վերացում: Ուժը կորցրած է ճանաչվում Հարկային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասը, որով արդյունաբերական կազմակերպություններին փոխհատուցվում էր իրենց արտադրության մեջ որպես հումք օգտագործվող որոշ նավթամթերքների (յուղերի) համար վճարված ակցիզային հարկը:
- Բենզինի նվազագույն հարկային շեմի բարձրացում:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվել է շահաբաժինների 15 տոկոսի չափով պետական տուրք՝ բանկերի թողարկած և Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում (կարգավորվող շուկայում) չցուցակված (առևտրին չթույլատրված) բաժնետոմսերի մասով հետևյալ գործողությունների համար՝
 - 1.բանկերի կողմից ֆիզիկական անձ համարվող բաժնետերերին շահաբաժին վճարելու համար,
 - 2.բանկերի կողմից իրավաբանական անձ համարվող բաժնետերերին շահաբաժին բաշխման մասին որոշում ընդունելու համար:
- Այս բաժնետոմսերի մասով մինչև շահաբաժինների վճարման (շահաբաժինները բաշխելու մասին որոշումը ընդունելու) օրը ներառող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ բանկերը հարկային մարմին են ներկայացնում (այդ թվում՝ թղթային) հարկային մարմնի սահմանած ձևով տեղեկատվություն:

*Հունիս ամսվա տեղեկագիրը ներառում է նաև հուլիս ամսին կայացած արտահերթ նստաշրջանի ընթացքում ընդունված նախագծերը:

- Բանկերը պետական տուրքի գումարը պետական բյուջե է վճարում մինչև շահաբաժինների վճարման (շահաբաժինները բաշխելու մասին որոշումը ընդունելու) օրը ներառող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու և ժամանակին վճարելու պատասխանատվությունը դրվում է բանկի վրա:
- ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվել է՝
 1. ռեզիդենտ կազմակերպությունների համար սահմանվելով շահութահարկով հարկման առանձին բազա, չցուցակված (առևտրին չթույլատրված) բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների համար շահութահարկի 15 տոկոս դրույքաչափ,
 2. ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների նմանատիպ շահաբաժինների համար 5 տոկոսի փոխարեն 15 տոկոս դրույքաչափ,
 3. չցուցակված (առևտրին չթույլատրված) բաժնետոմսերի մասով ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարած շահաբաժնի մասով բանկի վրա դնել հարկային գործակալի պարտավորություն,
 4. ֆիզիկական անձանց մասով ևս բանկը որպես հարկային գործակալ վերոնշյալ բաժնետոմսերի մասով շահաբաժին վճարելիս եկամտային հարկը պահելու է 15 տոկոս դրույքաչափով:
- Ընդ որում, տվյալ բանկի թողարկած բաժնետոմսերից բաժնետիրոջ կողմից ստացվող շահաբաժինները համարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժիններ նաև այն դեպքում, երբ շահաբաժինը ստացող բաժնետիրոջը պատկանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում ցուցակված տվյալ բանկի բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը շահաբաժինների բաշխման (վճարման) օրվա դրությամբ գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր ցուցակված բաժնետոմսերի անվանական արժեքի մեկ տոկոսը:
- Օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի փետրվարի 1-ից և տարածվում է նաև մինչև 2027 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով բաշխվող կամ վճարվող շահաբաժինների վրա: Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» օրենքի փոփոխությունները ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում են մինչև 2027 թվականի հունվարի 31-ը ներառյալ շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման կամ շահաբաժինների վճարման մասով:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն արդիականացնել ոլորտի պետական վերահսկողությունը՝ ներդնելով «պատասխանատու խաղի» կանոնները և սահմանափակելով չլիցենզավորված կազմակերպիչների գործունեությունը:
- Առանցքային ուղղություններից մեկը գովազդային վիճակախաղերի խստացումն է. այսուհետ դրանց կազմակերպիչ կարող է լինել միայն սեփական ապրանքները կամ ծառայությունները գովազդող անձը, իսկ մրցանակային ֆոնդը պետք է լինի բացառապես իրային և չգերազանցի շրջանառության 0.5 տոկոսը: Սահմանվում է, որ խաղերի և վիճակախաղերի ցանկացած գովազդ նախքան հրապարակումը պետք է էլեկտրոնային տարբերակով համաձայնեցվի լիազոր մարմնի հետ:
- Գովազդատուները պարտավորվում են ձեռնարկել ողջամիտ տեխնիկական միջոցներ (geo-blocking)՝ Հայաստանի տարածքում նման գովազդի ցուցադրումը կանխելու համար: Ֆինանսական գործառնությունների մասով սահմանվում է, որ խաղադրույքները, հաշվի համալրումը և շահումների տրամադրումը պետք է կատարվեն բացառապես անկանխիկ եղանակով և հայկական դրամով: Բացի այդ, ներդրվում է անձի պարտադիր նույնականացման պահանջ նախքան խաղին մասնակցելը, և խստիվ արգելվում է այլ անձի պատկանող խաղային հաշվի օգտագործումը: Կազմակերպիչները պարտավոր են միանալ «Մոնիտորինգային կենտրոնին», որն իրականացնում է բոլոր խաղային օպերացիաների, շահումների գրանցումն ու ռիսկերի գնահատումը:
- Ստուգումների համակարգում խաղային ոլորտի սուբյեկտների 70 տոկոսը պարտադիր դասակարգվելու է որպես բարձր ռիսկային, ինչը ենթադրում է տարեկան առնվազն մեկ ստուգում: Խաղասրահների համար սահմանվում են նաև տեխնիկական պահանջներ. դրանց ներսի տարածքը պետք է անտեսանելի լինի դրսից, իսկ տեսանկարահանման նյութերը պետք է պահպանվեն առնվազն 30 աշխատանքային օր: Պատասխանատվության միջոցները զգալիորեն խստացվել են. գովազդի ոլորտի խախտումների համար տուգանքը կարող է հասնել նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկին (2 միլիոն դրամ):
- Չլիցենզավորված կայքերը չարգելափակելու համար ինտերնետ օպերատորները կարող են տուգանվել մինչև 3 միլիոն դրամով: Գովազդային վիճակախաղի կազմակերպումը պետական գրանցում չունեցող անձանց պատվիրելու դեպքում սահմանվել է տասը միլիոն դրամ տուգանք:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Առաջարկվում է կատարել մի շարք փոփոխություններ՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման կարգավորումները համապատասխանեցնելով ՏՀԶԿ Ստանդարտին: Մասնավորապես՝
 - հստակեցվում և սահմանվում են առանցքային հասկացությունները՝ դրանց միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով,
 - ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության ստուգման իրականացումը վերապահվում է հարկային մարմինին՝ ընդլայնելով նաև թեմատիկ հարկային ստուգումների շրջանակը,
 - պատասխանատվություն է նախատեսվում հաշվետերերի և վերահսկող անձանց համար՝ կեղծ, թերի կամ պարտադիր տեղեկություններ չներկայացնելու դեպքերում,
 - երկարաձգվում է հարկային մարմին տեղեկությունների ներկայացման ժամկետը,
 - հստակեցվում են ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի և տեղեկատվության պահպանման պահանջները՝ սահմանելով դրանց պահպանման նվազագույն հնգամյա ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Հետադարձ հիփոթեքը որպես բնակելի տան, բնակարանի, այգետնակի կամ ամառանոցի գրավի հատուկ տեսակ: Հետադարձ հիփոթեքի պայմանագրի հիման վրա բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավորվում է հետադարձ հիփոթեքի պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով պարբերական ամենամսյա վճարումների ձևով կամ պայմանագրում նշված նպատակի համար դրամական միջոցներ տրամադրել գրավատուին Կենտրոնական բանկի սահմանած հատուկ բանկային հաշվի միջոցով, իսկ գրավատուն՝ օրենքով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքի հասած, անշարժ գույքի՝ բնակարանի, բնակելի տան, այգետնակի կամ ամառանոցի սեփականատերը, պահպանելով համապատասխան գույքի նկատմամբ սեփականության և օգտագործման իր իրավունքները, իր գույքը ծանրաբեռնում է հետադարձ հիփոթեքով:
- Հետադարձ հիփոթեքի պայմանագիրը պետք է ունենա անբաժանելի մաս կազմող հավելված, որտեղ պետք է նկարագրվի պայմանագիր կնքելու պահին անշարժ գույքի փաստացի վիճակի տվյալները: Պայմանագիրը կնքվում է անժամկետ և դադարում է գրավատուի մահվան, գույքի օտարման կամ պարտավորությունների ամբողջական մարման դեպքում:

Բանկերի վերակառուցման մասին և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Օրենքը կարգավորում է Հայաստանում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի վերակառուցման գործընթացը: Դրա հիմնական նպատակներն են ֆինանսական համակարգի կայունության ապահովումը, ձախողվող բանկի կրիտիկական գործառույթների անընդհատության պահպանումը և պետական միջոցների պաշտպանությունը: Գործընթացի առանցքային սկզբունքն այն է, որ վերակառուցման արդյունքում առաջացած վնասները կրում են բանկի բաժնետերերն ու պարտատերերը, սակայն ավանդների հատուցումը երաշխավորող օրենքով սահմանված չափով ավանդները մնում են լիովին պաշտպանված: Եթե որևէ մասնակից կամ պարտատեր վերակառուցման արդյունքում կրի ավելի մեծ վնաս, քան կկրեր բանկի լուծարման դեպքում, վնասը փոխհատուցվում է («no creditor worse off» երաշխիք):
- Վերակառուցման բացառիկ լիազորությունը վերապահվում է Կենտրոնական բանկին: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր բանկի համար մշակելու է վերակառուցման ծրագիր և իրավունք է ունենալու բանկից պահանջել վերացնել հնարավոր վերակառուցմանը խոչընդոտող հանգամանքները, օրինակ՝ որոշակի գործունեության սահմանափակումը:
- Բանկը վերակառուցվում է 3 հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում.
 - բանկը ձախողվել է կամ հավանական է, որ կձախողվի.
 - ողջամիտ ժամկետում հնարավոր չէ վերացնել ձախողման հիմքերը բանկի, մասնակիցների կամ Կենտրոնական բանկի միջոցառումներով,
 - վերակառուցումն անհրաժեշտ է վերակառուցման նպատակներից որևէ մեկի ապահովման համար:
- Վերակառուցման համար նախատեսվում են հատուկ գործիքներ, որոնք Կենտրոնական բանկը կարող է կիրառել առանց բաժնետերերի կամ հաճախորդների համաձայնության: Դրանք ներառում են բանկի կամ դրա մի մասի վաճառքը երրորդ անձանց, «կամուրջ բանկի» ստեղծումը՝ բանկի կրիտիկական ծառայությունների մատուցումը շարունակելու համար, և ակտիվների առանձնացումը հատուկ վարկային կազմակերպության միջոցով՝ դրանց իրացումից առավելագույն միջոցներ ստանալու նպատակով:
- Գործընթացը ֆինանսավորելու համար ստեղծվում է Վերակառուցման հիմնադրամ, որի միջոցները ձևավորվում են բանկերի կողմից վճարվող միանվագ և պարբերական վճարներից: Օրենքով երաշխավորվում է, որ որևէ պարտատեր կամ մասնակից չպետք է կրի ավելի մեծ վնաս, քան կկրեր բանկի լուծարման դեպքում:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Փոփոխությունները նպատակ ունեն էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաները (էլեկտրոնային ՀԴՄ) դարձնել սովորական ՀԴՄ-ներին լիարժեք այլընտրանքային գործիք և ընդլայնել դրանց կիրառության ոլորտները:
- Օրենսգրքի 56-րդ հոդվածում մանրածախ առևտրի, բնակչության համար աշխատանքների կատարման և (կամ) բնակչությանը ծառայությունների մատուցման գործարքների մասով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հատուկ ծրագրեր կիրառող կամ օրենսգրքի 74-րդ գլխով սահմանված կարգով հսկիչ դրամարկղային մեքենա շահագործող ապրանք մատակարարողը, աշխատանք կատարողը և (կամ) ծառայություն մատուցողը կարող է հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր դուրս չգրել, եթե ապրանքի գնորդը, աշխատանքն ընդունողը և (կամ) ծառայությունն ստացողը չի պահանջում դուրս գրել հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր:
- Այս կարգավորման առումով 2027թ. հունվարի 1-ից որպես հսկիչ դրամարկղային մեքենա շահագործող դիտարկվելու է նաև էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա շահագործողը: Հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու պահին, իսկ բեռնագիրը դուրս է գրվում մինչև ապրանքի տեղափոխությունը: 2026թ. սեպտեմբերի 1-ից նախատեսվում է, որ բացառությամբ նույն հոդվածի 8-րդ և 8.1-ին մասերով սահմանված դեպքերի՝ հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում մինչև ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումն ավարտելու և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու պահին, բեռնագիրը դուրս է գրվում մինչև ապրանքի տեղափոխությունը:
- Օրենսգրքի 57-րդ հոդվածում 01.01.2027թ. -ից՝
 1. հարկ վճարողի կողմից տեղափոխվող ապրանքը օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով ուղեկցվելու կարգավորումները տարածվում են նաև էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնով ուղեկցվելու վրա,
 2. նույն հոդվածով նախատեսված է, որ Կառավարության սահմանած կարգով դուրս գրված (գեներացված) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը նույն հոդվածի իմաստով հանդիսանում է ուղեկցող փաստաթուղթ:
 3. առանց ուղեկցող փաստաթղթի մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի մասով նույն հոդվածի դրույթները չեն տարածվում հարկ վճարողի կողմից վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը:

- Առանց ուղեկցող փաստաթղթի մատակարարվող կամ տեղափոխվող ապրանքի մասով նույն հոդվածի դրույթները տարածվում են ապրանքներ ձեռք բերող հարկ վճարողների կողմից տեղափոխվելու դեպքում տեղափոխվող ապրանքների վրա: Այս կարգավորումների իմաստով ևս հսկիչ դրամարկղային մեքենաների մասով դիտարկվելու է նաև էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան:
- Օրենսգրքի 380-րդ հոդվածով 2027թ. հունվարի 1-ից կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության պարտադիր լինելու կարգավորումներից բացառություն է կատարվել նաև այն դեպքերի համար, երբ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեությունն իրականացնում են սահմանված կարգով հաշվառված էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայով:
- Օրենսգրքի 380.1-րդ հոդվածով 2027թ. հունվարի 1-ից 1.1-րդ մասով սահմանվել է, որ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է ոչ միայն էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղեւորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումների իրականացման դեպքում, այլև Կառավարության սահմանած գործունեության ոլորտներում, դեպքերում և ժամկետներում՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վաճառք իրականացնելիս, աշխատանքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս:
- Որպես ընդհանուր նորմ սահմանվել է, որ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան որպես ծրագրային ապահովում հնարավորություն է ընձեռում գեներացնելու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն հետևյալ դեպքերում.
- (1) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով,

- (2) Էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղեւորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումների իրականացման գործարքների մասով,
- (3) Էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքների միջոցով վճարումն ընդունվելու դեպքում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համար,
- (4) Կառավարության սահմանած գործունեության ոլորտներում, դեպքերում և ժամկետներում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից աշխատանքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս:
- Սահմանվել է, որ Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի տեխնիկական պահանջները, դրա հաշվառման, դրա միջոցով գեներացվող Էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմանները, ինտերնետային կայքի կամ Էլեկտրոնային հավելվածի պահանջները, ինչպես նաև այլ հարկ վճարողի անունից Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա կիրառելու և Էլեկտրոնային կտրոն գեներացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:
- Մինչև վերոնշյալ կարգավորումների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը Էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցողների կողմից պատվերների ձևակերպման և ուղեւորափոխադրումների, ինչպես նաև մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումների դեպքում կիրառվում են մինչև 2027թ. հունվարի 1-ը գործող կարգավորումները:
- Օրենսգրքի 408-րդ հոդվածի 7-րդ մասից 2027թ. հունվարի 1-ից հանվել է այն նորմը, որ նույն մասի կիրառության իմաստով՝ պետական տուրքի գումարը սահմանված չափից պակաս հաշվարկել է համարվում նաև ուղեւորափոխադրումն առանց Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կամ դրա կիրառության կանոնների խախտմամբ իրականացնելը, երբ յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք 200 հազար դրամի չափով:

- 2027թ. հունվարի 1-ից միասնականացվել են հսկիչ դրամարկղային մեքենաների և Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնները խախտելու կամ դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար պատասխանատվության միջոցները՝
 1. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր լինելու դեպքում ապրանքների մատակարարման կամ աշխատանքների, ծառայությունների կատարման գործարքներն, ուղեւորափոխադրումներն առանց Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի իրականացնելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղեւորափոխադրումներ իրականող ֆիզիկական անձը տուգանվում է 500 հազար դրամի չափով,
 2. հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների յուրաքանչյուր խախտման համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը կամ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղեւորափոխադրումներ իրականող ֆիզիկական անձը տուգանվում է 200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի գումարի հանրագումարի չափով,
 3. հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագիրն արտաքին ծրագրերին ինտեգրած լինելու դեպքում կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից այդ ծրագրերի և հսկիչ դրամարկղային մեքենայի ծրագրի միջամտության արդյունքում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում տպագրված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանման, ԱՏԳ ԱԱ ծածկագրի, աշխատանքի կամ ծառայության կոդի, քանակի և ծավալի կամ արժեքի վերաբերյալ տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն հարկային մարմին ուղարկելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 5 միլիոն դրամի և բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության մեկ տոկոսի գումարի հանրագումարի չափով:

«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում և այլ հարակից օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Առանցքային նորույթը Եվրոպական միության Առևտրի վերահսկման և փորձագիտական (TRACES) համակարգում տնտեսավարողների գրանցման պարտադիր պահանջի սահմանումն է՝ պայմանավորված Հայաստանի կողմից 2025 թվականի մարտից ստացված ձկնամթերքի արտահանման թույլտվությամբ:

«Գնումների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Գնումների մասին» օրենքում նախատեսվում են հետևյալ փոփոխությունները՝
 - 1.Տրվել է շրջանակային համաձայնագրի, Արհեստական Բանականության սահմանումը:
 - 2.Արգելվում է գնումների հասկացությանը համապատասխանող գործարքները որակել եւ իրականացնել որպես պետական դրամաշնորհ:
 - 3.Սահմանվել է մրցակցային ընթացակարգը և սահմանվել են մրցակցային ընթացակարգի երկու մեծ տեսակ՝ Ակտիվ և Պասիվ:
 - 4.Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումներին մասնակցելու իրավունք չունեցողների ցանկում (2 տարի ժամկետով), եթե վերջինս խախտել է պայմանագրային պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծմանը, կամ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց և չի վճարել սահմանված ապահովումները կամ տույժերը:
 - 5.Հայտերը կարող են ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն: Նախատեսվում է, որ գնումը կարող է կատարվել մեկ անձից բացառիկության, հեղինակային իրավունքների առկայության, արտակարգ իրավիճակների, նախատիպերի ձեռքբերման կամ գործող համակարգերի շարունակականության ապահովման դեպքերում:

«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Վերասահմանվում է «Ենթաֆոնդ» հասկացությունը: Ենթաֆոնդը միևնույն ֆոնդի կազմում առանձնացված՝ միասնական գործունեության կանոններ ունեցող ակտիվների համախումբ է, որը ֆոնդի ակտիվների այլ համախմբերից կարող է տարբերվել ներդրումային քաղաքականությամբ, եկամուտների բաշխման քաղաքականությամբ, փայերի տեղաբաշխման (հետգնման) վճարներով, փայերի արժույթով, կառավարչի պարգևավճարով կամ դրանց համակցությամբ: Իսկ ոչ հրապարակային ֆոնդի մասնակիցների առավելագույն թիվը սահմանվում է 99: Այդ շեմը գերազանցելու դեպքում ֆոնդը 90 օրացուցային օրվա ընթացքում պարտավոր է կա՛մ ընդհանուր կարգով վերագրանցվել որպես հրապարակային ֆոնդ, կա՛մ նվազեցնել մասնակիցների թիվը: Պահանջը չկատարելը հիմք է ֆոնդի՝ դատական կարգով լուծարման համար:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- ՀՀ հարկային օրենսգրքում 2021թ. կատարված փոփոխություններով և ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 12-ի N1324-Ն որոշմամբ ներդրվեց օրինապահ հարկ վճարողի ինստիտուտը: Օրինապահ հարկ վճարողին վերաբերող հիմնական կարգավորումները սահմանված են օրենսգրքի 293.1-ին հոդվածով: Միաժամանակ, այդ հոդվածի 3-րդ մասով օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողության ժամկետը սահմանված է հավաստագրի տրամադրման օրվանից 12 ամիս: Անհրաժեշտություն է առաջացել վերանայելու օրենսգրքով սահմանված կարգավորումները՝ սահմանելով.
 1. օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման գործընթացը չի վերաբերի ներդրումային ֆոնդերին, հաշվի առնելով, որ ներդրումային ֆոնդը կարող է հանդիսանալ նաև ակտիվների համախումբ և նրա փոխարեն հանդես է գալիս տվյալ ներդրումային ֆոնդի կառավարիչը, որը սահմանված կարգով կարող է դիմել և ստանալ հավաստագիր, ինչպես նաև կիրառվող շահութահարկի նվազ՝ 0.01% դրույքաչափը,
 2. օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադվելու է անժամկետ,
 3. հարկային մարմինը իրականացնելու է օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների գործունեության մշտադիտարկում՝ եռամսյակային կտրվածքով, նպատակ ունենալով ապահովելու հարկ վճարողի շարունակական օրինապահ վարքագծի դրսևորումը,
 4. Կառավարության կողմից կսահմանվի հավաստագրի գործողության դադարեցման կարգը, որտեղ կնշվեն այն դեպքերը, երբ իրականացվող մշտադիտարկման արդյունքներով օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողությունը կդադարեցվի:
- Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների մասով հարկային մարմինը օրենսգրքով սահմանված հարկ վճարողների սպասարկման գործառույթը կիրականացնի անհատական՝ հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի միջոցով, համալիր հարկային ստուգումների պլանավորման ընթացքում օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում ռիսկայնությունը որոշող չափանիշները գնահատելիս կկիրառվի 0,8 գործակից:
- Միաժամանակ, օրինապահ հարկ վճարողների համար վարչարարության բարենպաստ պայմանների ընդլայնման շրջանակներում նախատեսվում է հավաստագիր ունեցող օրինապահ հարկ վճարողների ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման մասով սահմանել առաջնահերթություն:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Առաջարկվում է փոփոխություն կատարել օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցնելով, որ իրավաբանական և ֆիզիկական անձինք առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման, կարող են իրականացնել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հետևյալ աշխատանքները՝
 - բացառապես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ սեփական տնտեսական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով՝ մինչև երկու մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն, մինչև հինգ մետր խորությամբ.
 - շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ օրացուցային տարվա ընթացքում առավելագույնը 20 խորանարդ մետր ծավալով.
 - շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ բազմաբնակարան շենքերի և հասարակական շինությունների կառուցման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում նշված խորությամբ:
- Օրենսգրքի 62-րդ հոդվածից հանվում են «սեփական կարիքների համար» բառերը, ինչն իրավական հիմք է ստեղծում փոքր ձեռնարկությունների կողմից արդյունահանված հումքի օրինական իրացման համար: Հորատապայթեցման աշխատանքների արգելքը, իր հերթին, ուղղված է անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ նվազեցնելով շրջակա միջավայրի և բնակչության համար հնարավոր ռիսկերը:

«Դեղերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Առաջարկվում է վերանայել ներմուծման հավաստագրի տրամադրումը մերժելու հիմքերը, ընդլայնել վերապիտակավորման հնարավորությունները և ապահովել բնակչության համար կենսական նշանակության, այդ թվում՝ հիմնական և ուռուցքաբանական դեղերի առավել հասանելիությունը: Նախատեսվում է սահմանել դեղագործական արտադրանքի պահպանություն իրականացնող մաքսային պահեստների և այլ սուբյեկտների լիցենզավորման ու հավաստագրման պարտադիր պահանջներ՝ դեղերի որակի և անվտանգության ապահովման նպատակով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)
«Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (հասանելի՝ հետևյալ հղումով)

- Նախատեսվում է հստակեցնել անշարժ գույքի կադաստրային քարտեզներում և պետական գրանցման տվյալներում առկա սխալների հայտնաբերման ու ուղղման գործընթացը: Սահմանվում են սխալների երկու հիմնական տեսակներ՝ քանակական և որակական: Քանակական սխալներ են համարվում մակերեսի, գծային չափերի կամ երկրաչափական տեսքի անհամապատասխանությունները, իսկ որակական սխալների շարքին են դասվում նպատակային կամ գործառնական նշանակության, ինչպես նաև սեփականության սուբյեկտի վերաբերյալ ոչ ճիշտ տվյալները: Սխալների ուղղման հիմք կարող են հանդիսանալ իրավահաստատող փաստաթղթերը, չափագրման տվյալները, հարևանների համաձայնությունները կամ Կադաստրի կոմիտեի նախաձեռնած վարչական վարույթը:
- Ծառայությունների արդյունավետ կազմակերպման նպատակով նախագծով ընդլայնվում են նաև որակավորված անձանց՝ չափագրողների լիազորությունները: Նրանց հնարավորություն է տրվում համապատասխան առցանց ծածկագրի առկայության դեպքում, նույնիսկ առանց համաձայնության, հասանելիություն ստանալ պատվիրատուի և հարակից գույքերի տվյալներին:
- Նախագծով կարգավորվում են նաև ֆինանսական հետևանքները: Եթե գրանցման վերանայման արդյունքում հողամասի մակերեսը նվազում է, սեփականատերը համայնքի կողմից ստանալու է դրամական փոխհատուցում՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով: Իսկ եթե մակերեսը մեծանում է սխալի ուղղման արդյունքում, սեփականատերը պարտավոր է վճարել ավելացած հատվածի կադաստրային արժեքը:
- Փոփոխությունները կապվում են նաև քաղաքաշինական փաստաթղթերի վարման հետ: Համայնքների ղեկավարները պարտավորվելու են վարել ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, որտեղ արտացոլվելու են բոլոր փոփոխությունները:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենք և հարակից օրենքներ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթը կոչված է ՀՀ-ում ներդնել արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտը, որը նախատեսում է կոնկրետ ապրանքների (արտադրանքի) արտադրողների և ներմուծողների կողմից թափոնների որոշ տեսակների (հատուկ թափոնների) հետագա պարտադիր գործածության ապահովման համակարգ:
- Այդ համակարգի արդյունավետ գործառնումն ապահովելու համար, ի թիվս այլնի, առաջարկվել է արտադրողի պատասխանատվության կազմակերպությունների (այսուհետ՝ ԱՊԿ) ստեղծում, ֆինանսական միջոցների հավաքագրման ծախսարդյունավետ ու ինքնածախսածածկող տնտեսական մոդել, ԱՊԿ-ի փոխհարաբերությունների կանոնակարգում արտադրողների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվող կարգավորման համաձայն ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությունների (բացառությամբ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված կազմակերպությունների) առնվազն 200 միլիոն դրամի չափով բաժնետոմսեր կամ պարտատոմսեր ձեռք բերման պարագայում, վերջինս, իր դիմումի հիման վրա, ձեռք է բերելու իրավունք ստանալու Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտություն, ինչը ենթադրում է նաև Հայաստանում տարեկան առնվազն 30 օր բնակվելու պարտավորություն:
- Հարկային ռեզիդենտության տրամադրումը օտարերկրյա ներդրողներին կխթանի իրենց՝ այլ ֆինանսական շուկաներում ներդրումները կատարել Հայաստանի ֆինանսական շուկայի մասնակիցների միջոցով:

«Հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է Հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանել, որ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած երկրորդային հումքի ցանկում ներառված հումքի կամ թափոնների իրացումից ստացված եկամուտները կդիտարկվեն որպես նվազեցվող եկամուտ:
- Միաժամանակ, նախագծով առաջարկվում է հարկային արտոնություն տրամադրել (շահութահարկ վճարողների համար համախառն եկամտից նվազեցում նախատեսվի) այն տնտեսավարողների համար, որոնք իրենց արտադրական գործունեության նպատակով ձեռք կբերեն ու կօգտագործեն հանրապետության տարածքում առաջացած և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 136-Ն որոշմամբ սահմանված երկրորդային հումքի ցանկում թվարկված հումքը կամ թափոնները:
- Նախագծի հիմնական նպատակը թափոնների հավաքման և վերամշակման ոլորտի տնտեսական խթանումն է՝ հարկային վարչարարության պարզեցման և լրացուցիչ ֆինանսական բեռի նվազեցման միջոցով:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունմամբ ակնկալվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել լրացումներ, որոնք հնարավորություն կտան պետության (համայնքի) գույքային շահերի պաշտպանության հայցերով, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով գույքը, այդ թվում՝ բաժնեմասը, բաժնետոմսը, փայլը, որպես հայցի ապահովման միջոց, հանձնել ժամանակավոր պետական կառավարման, երբ այն չհանձնելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի, այդ թվում՝ բաժնեմասի, բաժնետոմսի, փայլի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել պետության կամ հասարակության գույքային կամ ոչ գույքային շահերին: